

**«ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ» ԱՂԱՆԴ ԿԱՍ
ՄԻ «ԲԱՐԵՆՈՐՈԳԶՈՒԹՅԱՆ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

*«Դու պապանձեցրու, Տե՛ր, հերձվածողների բերանները...
կործանի՛ր Քո Սուրբ Եկեղեցու վրա հարձակվողներին...»*

Սուրբ Եղիշե Վարդապետ

Շատերի մոտ է այս հարցը առաջանում. ավետարանական եկեղեցի կոչվածը եկեղեցի՞ է, թե՞ աղանդավորական ինքնակոչ կազմակերպություն, այնտեղ հաճախելով արդյոք չե՞նք ուրանում մեր Առաքելական Սուրբ Հավատը, և արդյոք ինքներս մեզ դժոխքի չենք դատապարտում: Հարցին պատասխանելու համար մի փոքր էքսկուրս կատարենք՝ օգտվելով հենց իրենց՝ ավետարանականների գրքերից:

ՊԱՏՄԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍ ԿԱՍ ՍԿԻԶԲՆ ԶԱՐՅԱՑ

1846 թվական. հուլիսի մեկ. Թուրքիա. Ստամբուլ... 40 հայեր Ստամբուլում հիմնեցին, այսպես կոչված, հայ ավետարանական եկեղեցի՝ այդ օրը ևս մտցնելով հայ ժողովրդին դժբախտություն բերող տարեթվերի մեջ:

Չորս տարի անց՝ 1850 թվականի նոյեմբերի 27-ին, հայ ավետարանականները պաշտոնական ճանաչում ստացան օսմանյան սուլթան *Աբդուլ Մեջիթի* կոմից¹, որով վերջինս կարողացավ հայության մի ստվար զանգված բաժանել Մայր եկեղեցուց և օտարացնել հայությունից: Իսկ բողոքական առաջնորդներ հայերը փաստորեն կամա թե ակամա նպաստեցին դրան: Հայ բողոքականներին օժանդակում էին նաև ամերիկացի բողոքական միսիոներները և Հայ Առաքելական Եկեղեցուն թաքնված «բարենո-րոգչականները»²:

Հայ Առաքելական Եկեղեցին կտրականապես մերժեց, այսպես կոչված բարենորոգչական (*բարեկարգողական, մողեռնիստական*) շարժումը, որովհետև ինչպես **Սիմեոն Երևանցի կաթողիկոս**ն էր ասում.

¹ *Վահան Թութիկեան*, «Հայ Աւետարանական եկեղեցին» 1846-1996, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան և Հայկական Ժառանգութեան յանձնախումբ, 1996թ., էջ 11:

² Նույն տեղում, էջ 11:

«Ոչ է հաւտն մեր հնացեալ զի նորգեսցի և ոչ է թերի՝ զի լրացի» (*«Մեր Հավատը հնացած չէ, որ նորոգվի և ոչ էլ թերի, որ լրացվի»*), Հայ Առաքելական Եկեղեցին, Առաքելական ժամանակներից գալով, միևնույն ժամանակ անաղարտն է՝ շնորհիվ իր ավանդապահության և դարերի ընթացքում ամեն կարգի մոդերնիզմի մերժման: Այն սրբությամբ և առանց փոփոխման մեզ է հասցրել մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկարար Լույս Վարդապետությունը:

Այդ մոդերնիզմը իրենց պայքարի հիմնական աղբյուր դարձրին բողոքական հակվածություն ունեցող հայերը: Այդպիսիների թվում կային նաև հոգևորականներ, որոնք, մոռացած իրենց ուխտը, չարի գործիք էին դարձել: **Հակոբոս Պատրիարքը** 1839 թվականին *«բարենորոգչական շարժմանը»* նպաստելու համար բանտարկեց և աքսորեց երեք հայ հոգևորականի: Նույն տարում բազմաթիվ մարդիկ կանչվեցին Պատրիար-քարան՝ այդ հարցի կապակցությամբ քննվելու³:

Կոստանդինապոլսի Հայոց Պատրիարքարանը, նկատելով ամերիկացի միսիոներների հսկայական ազդեցությունը մոդերնիստների վրա, այդ *«ինքնակոչ բարեկարգիչներին»* իրավացիորեն բնութագրեց որպես *«ամերիկացի միսիոներների վարձկաններ»*⁴:

«Բարեկարգության» անվան տակ այդ վարձկանները փորձում էին Եկեղեցում տարածել աղանդավորական և հերձվածողական մտազարու-թյուններ: Հայոց Պատրիարքարանի գլխավոր խոսնակ **Ավետիս Դեր-պեդյանը** նշում է, թե ինչպիսի հերետիկոսությունների մեջ էին ամբաս-տանվում այդ *«լուսավորիչները»*: Նրանք մերժում էին Եկեղեցու Սուրբ Ավանդությունը, մերժում էին ընդունել Պատարագի ընթացքում տեղի ունեցող փոխարկումը, երբ հացը և գինին փոխվում են Քրիստոսի Մարմնի և Արյան, մերժում էին Սրբերի բարեխոսությունը, մերժում էին Խոստովանու-թյունը քահանային և այլն...⁵:

Այսպիսով՝ *«բարեկարգիչները»* դարձան Մայր Եկեղեցու և նրա Աստ-վածավանդ Լույս Վարդապետության, նրա հրաշք Ծեսի քննադատները⁶:

Նրանք դիվական լրբությամբ և հանդգնությամբ փորձեցին լինել

³ Նույն տեղում, էջ 43:

⁴ Նույն տեղում, էջ 18:

⁵ Նույն տեղում, էջ 18:

⁶ Նույն տեղում, էջ 17:

«սրբագրիչ սրբոց»: Իրենց նպատակները իրագործելու համար նրանք հիմնեցին գաղտնի մի միություն՝ ստապատիր *«Բարեպաշտության միա-բանություն»* անունով⁷:

Հայ Եկեղեցին ամեն ինչ արեց, որպեսզի իր հոտի մոլորված զավակներին հետ պահի *«հոգեկործան նոր աղանդների վարդապետությունից»* և վերադարձնի փրկարար ճանապարհին, սակայն՝ ապարդյուն: *«Բարենո-րոգչության»* կողմնակիցների շարունակական անդամների և գործողությունների համար Հայոց պատրիարքարանը ստիպված եղավ զորավոր հակադարձության գնալ, և քանի որ նրանք հաշտեցման և իրենց դիվական ծրագրի դադարեցման որևէ քայլ չէին կամենում անել, Պատրիարքը արդարացիորեն նրանց բանադրեց, և Թուրքիայի տարածքի Առաքելական բոլոր եկեղեցիներում հավատացյալ հոտին զգուշացվեց. **«Ջգուշանալ արդի աղանդավորների սխալ վարդապետություններին հետևող մոլորե-ցուցիչ և անբարեպաշտ անձերից»**⁸ (այսինքն՝ բարենորոգչական-ներից և ավետարականներից):

Սակայն Եկեղեցու դեմ ապստամբածները չսթափվեցին Պատրիարքի այդ քայլից, չզղջացին, չխոստովանեցին իրենց ծանր մեղքը և չվերադարձան Մայր Եկեղեցու գիրկ, չհիշեցին (կամ չուզեցին հիշել) Սուրբ Գրքի այն խոսքը, թե. **«Լսեցե՛ք ձեր առաջնորդներին և հնազանդ եղե՛ք նրանց»** (Եբր. 13.17), նաև **«Ապստամբությունը կախարդության մեղքի պես է, և անհնազանդությունը՝ կռապաշտության պես»** (Ա Թագավորաց 15.23), այլ դևի նման անզեղջ մնալով՝ չարիքի վրա առավել չարիք ավելացրին և իրենց հետ շատերին ապստամբեցնելով՝ կազմակերպեցին առանձին կրոնական համայնք՝ բողոքական միլլեթ⁹, այն պարագային, երբ թուրքահայության համար այդ օրերին միասնական լինելը առավել հրամայական էր դառնում՝ իրենց միասնականության առանցք և հիմք ունենալով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Շատերն էլ աղվեսի խորամանկությամբ թեև հաճախում էին Հայոց Եկեղեցի, սակայն ծախսյալ բողոքականներ էին: Այդպիսիներին բացահայտելու և ուղղելու համար Պատրիարքը հարցումների մի թերթիկ կազմեց, որով պետք է խոստովանեին ուղղափառ

⁷ Նույն տեղում, էջ 17:

⁸ Նույն տեղում, էջ 148:

⁹ Նույն տեղում, էջ 6:

դավանության մի շարք կետեր, մասնավորապես՝

- Փրկությունը միայն հավատով չէ, այլ նաև բարի գործերով:
- Ջինվորյալ Եկեղեցին անսխալական է:
- Ընդունում են Եկեղեցու յոթ Խորհուրդները¹⁰, որոնք կարող են կատարել միայն ձեռնադրված հոգևորականները:
- Մկրտությունը, հաղորդությունը, քահանայի մոտ խոստովանությունը պարտադիր և անհրաժեշտ պայման են փրկության հա-մար. Նա, ով Սուրբ հաղորդությունը չի համարում Քրիստոսի ճմարիտ Արյուն և Մարմին, հավիտենական դատապարտու-թյան ենթակա է /եթե հետ չկանգնի իր մոլորությունից և չա-պաշխարի:
- Սուրբ Կոյս Աստվածամոր և Սրբերի բարեխոսությունն ընդու-նելի է Աստծո առջև:
- Աստված հրաշքներ է գործում Սրբերի մասունքների և Սուրբ Խաչի միջոցով:
- Հավատալ Եկեղեցուն, նշանակում է հավատալ նրա Խորհուրդ-ների, ինչպես նաև՝ Սուրբ Ավանդությանը, որ ստացել ենք Առաքյալներից և նրանց հաջորդած Սուրբ Հայրերից:

Փոխանակ ընդունելու այս կետերը, ավետարանականները սկսեցին զգացական, դիվական հպարտությամբ և կեղծավորությամբ շաղախված հայտարարություններ անել՝ ասելով, թե իբր իրենք ճշմարիտ հավա-տացյալներ են, ընդունում են միայն Աստվածաշունչը, սիրում են իրենց ազգը, Մայր Եկեղեցին և պատիվ են համարում հայ քրիստոնյա կոչվել և այլն և այլն: Երբ սպառվեցին հաշտեցման բոլոր միջոցները, ինչպես վերն ասվեց, Մատթեոս պատրիարքը 1846 թվականի հունիսի 21-ին ազդագիր արձակեց, որով բանադրում (նզովում) էր հայ տխրահռչակ բարե-կարգիչներին, հեռացնում Հայ Առաքելական Եկեղեցուց և դադա-րեցնում նրանց հետ որևէ հաղորդակցություն՝ դրանով նրանց վերջնականորեն զատելով Հայ Առաքելական Եկեղեցուց¹¹:

Ավետարանականների աղանդը այնքան վտանգավոր էր դարձել, որ երբ Մատթեոս պատրիարք Չուհաջյանը /Չուխաճյան/ 1858

¹⁰ Եկեղեցու Յոթ Խորհուրդներն են՝ Մկրտություն, Գրոշմ, Հաղորդություն, Խոստովանություն, Պսակ, Ձեռնադրություն, Վերջին Օծում:

¹¹ Վ. Թութիկեան, էջ 22:

թվականին դարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր գլխավոր պարտականությունը համարեց պայքարել վասն ուղղափառ դավանանքի և ընդդեմ ավետա-րանա-բարենորոգչական հերձվածի¹²:

Նա 1861 թվականի ապրիլի 25-ին կաթողիկոսական բանադրա-կան կոնդակ արձակեց բողոքականների (բարենորոգչա-ավետարա-նականների) դեմ, որով քահանաներին պատվիրում էր այդպի-սիներին Հայ Եկեղեցի չընդունել և Եկեղեցական Սուրբ Խորհուրդներին չարժանացնել¹³:

ԱՌ ԱՅՍՕՐ ԱՅԴ ԲԱՆԱԴՐԱՆՔ-ՆՁՈՎՔԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ՉԻ ՎԵՐԱՑՐԵԼ ԵՎ ԲՈԼՈՐ ԲԱՐԵՆՈՐՈՂ-ՉԱԿԱՆ-ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՐՉՎԱԾԻ ՀԵՏԵՎՈՂՆԵՐԸ ԴՐԱ ՏԱԿ ԵՆ, ԵՎ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՎԵՐԱՑՆԵԼ ԱՅԴ ՆՁՈՎՔԸ, ՄԻՆՉԵՎ ՎԵՐՁԻՆՆԵՐՍ ՄԵՂԱՅԱԿԱՆՈՎ ՉՀՐԱԺԱՐ-ՎԵՆ ԻՐԵՆՑ ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՋՂՋՄԱՄԲ ՈՒ ԱՊԱՇ-ԽԱՐՈՒԹՅԱՄԲ ՎԵՐՍՏԻՆ ՉՄԻԱՆԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ:

Մատթեոս Ա կաթողիկոսն իր կոնդակով Հայ Եկեղեցուց վտար-վածներին վերստին Եկեղեցի ընդունելու համար նախապայման է դնում, որ նրանք զոջան (*ընդունեն իրենց մոլորված լինելու հանգամանքը, զոջան և խոստովանեն*), ընդունեն Առաքելական Եկեղեցու Ծեսերը, Սուրբ Խորհուրդները և Սուրբ Ավանդությունը¹⁴:

Արևելահայաստանի ավետարանականները, մորթապաշտական նկա-տառումներով, մի քանի անգամ փորձեցին խորամանկորեն վայելել Հայոց Եկեղեցու հովանավորությունը: **Գևորգ Գ կաթողիկոսի օրոք (1866-1882 թթ.)** նրանք հալածանքներից խուսափելու նպատակով առաջարկեցին առանց իրենց համոզմունքները փոխելու ընդգրկվել Հայ Եկեղեցու գիրկը, սակայն, բնականաբար, մերժվեցին: Այնուհետև **Խրիմյան Հայրիկի կաթողիկոսութան օրոք (1892-1907 թթ.)** նորից նույն առաջարկությունն արեցին իրենց մոլար

¹² Նույն տեղում, էջ 81-82:

¹³ *Արտաշես Ղազարյան, Ռդնե Լեվոնյան*, «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», Երևան, 1999թ., էջ 101:

¹⁴ *Ղազարյան, Լևոնյան*, էջ 103:

վարդապետության մեջ մնալու պայմանով: Նրանք նաև առաջարկեցին, որ իրենց հոգևոր գործիչներին ձեռնադրի Մայր Աթոռը, սակայն նորից պնդելով, որ պահպանեն իրենց հերձվածը: Այդ խնդրանքը ևս իր լուծումը չգտավ¹⁵:

Ավետարանականները **1970 թվականին** առաջադրեցին **1846 թվականի** բանադրանքի վերացման և Առաքելական Եկեղեցու հետ իրենց մերձեցման հարցը, սակայն այն նույնպես իր լուծումը չգտավ: Եվ դա հասկանալի էր, քանի որ հնարավոր չէր վերացնել բանադրանքը, եթե նախապես վերացված չեն դրա պատճառները:

Ավետարանականները պետք է թեկուզ այսօր՝ **150 տարի** ուշացումով, ընդունեն իրենց սխալը, ընդունեն, որ իրենց վարդապետությունը հերձված է, **Սատրեոս պատրիարքի** խոսքերով ասած՝ ընդունեն, որ. **«իրենք խաբ-ված են սատանայի չար հրապույրներից»:** Այնուհետև դադարեցնելով իրենց ինքնակոչ եկեղեցիների գործունեությունը՝ զղջմամբ և ապաշխա-րությամբ հրաժարվեն դիվապատիր վարդապետություններից և Հայ Առաքելական Սուրբ և Ուղղափառ դավանանքը խոստովանելով՝ վերա-դառնան Մայր Եկեղեցի: Այսինքն՝ այսպես կոչված ավետարանական եկեղեցիների լուծարմամբ է *(գիտակցաբար օգտագործում ենք «լուծարում» բառը, որն օգտագործում են կազմակերպությունների պարագա-յում)*, որ պետք է լուծվի բանադրանքի խնդիրը: Մեկ այլ ուղի պարզապես չկա և չի էլ կարող լինել: Դա հասկանալով էր, որ **Վազգեն Առաջին կաթողիկոսը** ևս չվերացրեց բանադրանքը, քանզի հակառակ պարագայում Եկեղեցին պետք է ընդուներ, որ ինքն է սխալվում և մեղանչեր ճշմար-տության առաջ: Ավելին՝ **Վազգեն վեհափառը 1972 թվականի դեկտեմբերի 30-ի** նամակով վերջ տվեց այդ *«մերձեցման շարժմանը»:* Նա գրում է, թե պետք է ստուգել, թե հայ ավետարանականները որ չափով և ինչ ձևով են պատրաստ ընդունել Հայ եկեղեցու Դավանությունը, Ծեսը, Նվիրապետությունը և կանոնական ու ավանդական սկզբունքները¹⁶:

Ավետարանականները այս նամակից խիստ նեղացած են մինչև այսօր: Նրանք մերձեցում ասելով հասկանում էին և ակնկալում էին բոլորովին այլ բան և բնավ ոչ *«անառակ որդու դարձ»*¹⁷:

¹⁶ «Էջմիածին» ամսագիր, 11, 1973:

¹⁷ Վ. Թութիկեան, էջ 354:

Ավետարանականները չեն ընդունում «Մեկ Եկեղեցի, Մեկ ժողովուրդ, Մեկ Հայրենիք» կարգախոսը իր ուղիղ և ամբողջական իմաստով: Ավելին՝ նրանք այդ իմաստով այն նույնիսկ վտանգավոր են համարում՝ առանց տրամաբանական որևէ փաստարկների: Նրանք կամենում են պահպանելով իրենց թյուր, հոգեկործան վարդապետությունները, բողոքական պարզունակ «պաշտամունքները»՝ միաժամանակ Առաքելա-հիմն Սուրբ և Ուղղափառ Եկեղեցու հետ, իրենց խոսքերով ասած, «ներդաշնակությամբ» մեջ լինել՝ չմտածելով, որ դրան երբեք չեն համաձայնվի Եկեղեցու զավակները, քանզի. «... ի՞նչ կապ ունի արդարությունը անօրենության հետ և կամ ի՞նչ հարաբերություն լույսի և խավարի միջև և կամ ի՞նչ միաբանություն Քրիստոսի և բելիարի միջև...» (Բ Կորնթ. 6. 14, 15):

Վ. Թուրքիյանը այն տեսակետն է պնդում, որ միևնույն ազգի մեջ հարանվանությունները ցանկալի են (?!)։ «Միևնույն ազգի կյանքի մեջ բաղձալի է ունենալ տարբեր հարանվանությունների պատկանող եկեղեցիներ, ինչպես պարտեզի մեջ հաճելի կլիներ ունենալ տեսակավոր ծաղիկներ ...»¹⁸ և այլն և այլն: Սա արդեն արքայադրի հասնող սենտիմենտալություն է, որը որևէ եզր չունի քրիստոնեության հետ ընդհանրապես, և հայոց ազգի գոյապահպան ռազմավարական միևնույն հարցերի հետ մասնավորապես:

Ավետարանականների նկատմամբ իր ժամանակին խիստ բացասական վերաբերմունք ուներ նաև հայ քրիստոնյա հասարակ ժողովուրդը: Այդ առթիվ ավետարանականներից մեկն իր դժգոհությունն է հայտնում «Մշակի» էջերում՝ ասելով, որ որևէ մեկը չի ուզում լսել հայ ավետարանականներին, և իրենք մշտապես միայն նախատինքների և հայիոյանքների են արժանանում...¹⁹:

Երբ Մատթեոս պատրիարքը 1846 թվականի հունիսի 21-ին բանադրեց, բողոքական-բարենորոգչական-ավետարանական աղանդավորներն էլ կարծես դրան էին սպասում. ընդամենը մեկ շաբաթ չանցած՝ հուլիսի 1-ին, հիմնադրեցին իրենց հերձվածողական ուղղությունը՝ այն ինքնակոչ ձևով եկեղեցի հռչակելով:

Իսկ «ավետարանական եկեղեցու» հիմնադրման արարողությունը (Քրիստոսի Սուրբ Եկեղեցու կողքին, անսահման հպարտությունից

¹⁸ Վ. Թուրքիյան, էջ 355-356:

¹⁹ «Մշակ», 1880, համար 121, ըստ Ղազարյան, Լևոնյան, էջ 138:

դրդված, մարդկային ջանքերով նոր եկեղեցի հիմնելու մտքի հանդգնության չափի մասին խորհելը թողնում ենք ընթերցողին) շատ զավեշտալի կերպով ընթացավ: **1846 թվականի հուլիսի 1-ին** 37 տղամարդ, 3 կին, մի քանի միսիոներների հետ միասին հավաքվեցին միսիոներ *Թուայթի* տան ընդարձակ սենյակում (որը միսիոներական մատուռ էին անվանում): Աստվածաշնչի ընթերցումից և աղոթքից հետո ներկաները ընդունեցին միսիոներների օժանդակությամբ պատրաստված, այսպես կոչված, *հայ ավետարանական եկեղեցու* կանոնադրությունը: Ապա հատուկ հրավերով ներկա գտնվող միսիոներները ոտքի ելան և որպես բողոքական ավետարանական «եկեղեցիների» ներկայացուցիչներ՝ հրա-պարակավ նրանց ճանաչեցին իբրև Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցի²⁰:

Ջարմանալ կարելի է. մի՞թե այդ քառասուն թշվառ հայերը խականտորեն իսկապես կարծում էին, թե մեծամտության մտազարության ակնհայտ ախտանշաններ դրսևորող մի քանի ամերիկացիների որոշելով, Աստված պետք է իրենց հերձվածը ընդունի որպես Քրիստոսի ճշմարիտ եկեղեցի:

Պատրիարքարանի բնութագրումը չուշացավ. այն շատ հակիրճ, բայց ինքնին խոսուն էր՝ **հավատությանը**²¹: Մի անվանում, որ տրվում էր քրիստոնեությունը ուրացած և իսլամը ընդունած հայերին²²:

Ավետարանականների ներկայիս հովիվներից *Վ. Թուֆիկյանը* վերը նշված այդ իրադարձությունները, որոնք միանշանակ դիվական աստվածամարտ ապստամբության ոգով էին ղեկավարվում, անվանում է ոչ այլ կերպ, քան՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ ավետարանական եկեղեցու հիմնում²³: Սա արդեն հայիություն է

²⁰ Վ. Թուֆիկյան, էջ 60:

²¹ Նույն տեղում, էջ 60:

²² Այդպիսիների մասին սուրբ Գրիգոր Տաթևացին գրում է. «Անսուրբ են կոչվում /նաև/ հավատությանը, որոնք տարբեր հերձվածներով և անհավատությամբ զատվեցին Սուրբ Եկեղեցուց» (Չմեռան Հատոր, էջ 235), «... և հերձվածողն է ամբարիշտ, անհավատ և անաստված» (ԱմառանՀատոր՝ էջ 439): (Սուրբ գիրքը և Սուրբ Հայրերը հերձվածությունը հոգևոր պոռնություն են համարում, իսկ դրա փոխարեն Ճշմարիտ Աստվածպաշտությունը, Ճշմարիտ Հավատքը՝ Կուսություն):

²³ Նրանից բնավ կարծես ետ չի ուզում մնալ ավետարանական մեկ այլ առաջնորդ՝ Ռոբնե Լևոնյանը, որը փորձում է համոզել, որ դա ուղղակի աստվածային պարզ է... (Տե՛ս «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի» եռամսյա հանդես, 2001 թ., թիվ 3, էջ 1):

Սուրբ Հոգու դեմ և արժանի Սուրբ Գրքի այն «վայ»-ին, որ ասում է. «Վայ նրանց, ովքեր չարը բարի կանվանեն և բարին՝ չար, ովքեր լույսը խավար կհամարեն և խավարը՝ լույս, ովքեր դառնը քաղցր կհամարեն և քաղցրը՝ դառն...» (Եսայի 5.20) և «...ով որ հայիոյի Սուրբ Հոգուն, հավիտյանս թողություն չի ունենա» (Մարկ. 3.29): Իսկ տիեզերալույս սուրբ Հովհան Ոսկեբերանը ասում է. «Ամեն մի անջատում Եկեղեցուց, հեռացում է Սուրբ Հոգու շնորհներից»: Մի փոքր անց Վ. Թուրիկյանը, մոռանալով իր ասածը, օբյեկտիվ է դառնում. «... Հայ ավետարանական եկեղեցին, ինչպես որևէ կազմակերպություն, կատարելության կնիքը չի կրում և կատարյալ լինելու հավակնություն չունի»²⁴: Մոռանալով այն պարզ դրույթը, որ Եկեղեցին անսխալական է, կատարյալ, ավետարանական քարոզիչը հենց ինքն է փաստում, որ «ավետարանական եկեղեցին» բնավ էլ Եկեղեցի չէ, այլ ինչ որ աղանդավորական կազմակերպություն, քանի որ իրապես սխալ էր հիմնադրումից իսկ:

Քրիստոս Աստված Ինքը Հիմնեց Իր Եկեղեցին, և փողոցից ինչ-որ մեկը չի կարող եկեղեցի հիմնել կամ կազմակերպել:

*
* * *

Ինչպես ասվեց ավետարանականների կայացմանը խիստ նպաստում էր Արտաքին առաքելությունների ամերիկյան հանձնաժողովը: Ինչքան էլ տարօրինակ լինի, սրա նպատակը «օտար երկրների հեթանոսներին ավետարանելն էր»²⁵:

Եթե սկզբնական շրջանում այդ միսիոներները հիմնականում զբաղվում էին բժշկական ծառայություններ մատուցելով, որը գնահատանքի արժանացավ Հայ Եկեղեցու առաջնորդների կողմից, ապա մի փոքր անց ամերիկյան հոգևորսներն իրենց մեջ եղած մաղձը չկարողացան թաքցնել և փորձելով առավելագույնս տարածել իրենց դիվական, հոգեկործան վարդա-պետությունները՝ բացահայտ հարձակման անցան. սկսեցին վայրահաչել Հայ Եկեղեցու վրա, որչ տիեզերքում ամենաանաղարտ նրա Լույս Վարդապետության վրա,

²⁴ Վ. Թուրիկյան, էջ 362-364:

²⁵ Նույն տեղում, էջ 23:

նրա հրաշք Խորհուրդների վրա, Առաքյալներից և Սուրբ Հայրերից ավանդված Սրբազան Ավանդության վրա²⁶: Հայ Եկեղեցու հոգևորականներն այն եզրակացության հանգեցին, որ միսիոներները ի չար են գործածում իրենց հանդեպ ունեցած վստահությունը²⁷, և ստիպված էին արդեն, թերևս նույնիսկ ուշացումով, հակամարտ դիրք որդեգրել միսիոներ-ների նկատմամբ²⁸: Միսիոներներ, որոնք հեթանոսներին իրենց եղծված հավատը քարոզելու հետ մեկտեղ դիվական հպարտությամբ և անպատկառությամբ բռնված կամենում էին «*ծեռքի հետ*» քարոզել, «*դարձի բերել*» Քրիստոսի Առաքելահիմն Ուղղափառ Սուրբ Եկեղեցին²⁹:

Այնուհետև Հայոց Եկեղեցու և ազգի այս պառակտիչներն սկսեցին սեպ խրել Եկեղեցու և ազգի, պետության միջև՝ մերժելով Պետություն-Եկեղեցի դաշինքի գաղափարը: «*Նրանք չըմբռնեցին և ոչ էլ*

²⁶ Առանց որի անհնար է հասկանալ Աստվածաշունչը, որն, ըստ էության, այդ Ավանդության մաս է կազմում և Որի կանոնը (Աստվածաշնչի կազմի մեջ մտնող գրքերի թիվը) Եկեղեցին է մեզ տվել, քանի որ Սուրբ գրքի կանոնիկ գրքերի կողքին կան նաև ոչ կանոնիկները՝ պարականոններ: Այդ կանոնական սահմանը դրեց Սուրբ Եկեղեցին: **Սուրբ Իրենիոսը** հստակորեն նշում է. «**Առաքելական Ավանդությունը չիմացողները չեն կարող հասու լինել ճշմարտությանը միայն Աստվածաշնչից**»:

²⁷ Վ. Թուրիկյան, էջ 39:

²⁸ Նույն տեղում, էջ 26:

²⁹ Արևելահայոց մեջ բողոքական հերձվածը տարածելուն ամերիկյան հանձնախմբից բացի նպաստեցին նաև մի շարք այլ բողոքական ուղղություններ: Գերանցից էին Գերմանիայի Վուրդենբերգ քաղաքի աղանդավորները, որոնք սպասում էին, թե Քրիստոսի երկրորդ գալուստը լինելու է **1836 թվականին** (ի հակադրություն Ավետարանի այն ակնհայտ պնդման, որ այդ մասին ոչ մեկը չի կարող իմանալ) և որ Քրիստոս իջնելու է Արարատ լեռան վրա: Այդ գալստյանը ներկա լինելու համար նրանցից 1500 ընտանիք ուղևորվեցին Հայաստան: Սակայն ճանապարհին նրանց երկու երրորդը մահացավ: Իսկ մնացածները, բնականաբար, իրենց ակնկալածը չտեսան: (Աշխարհի վախճանի կոնկրետ տարի և օր նշելու պրակտիկան կիրառվում է շատ աղանդավորական ուղղությունների մոտ, որն հատկապես զավեշտական նրբերանգներ է ձեռք բերել «Եհովայի վկաներ» կոչվող տոտալիտար աղանդում): Սակայն նրանք բավական մեծ բողոքական ազդեցություն թողեցին տեղի բնակչության վրա: Այդպիսի մի ուրիշ խումբ էր Բագելի ավետարանական միսիոներական ընկերությունը, որը հիմնականում գործում էր Շուշիում: Սրանք ևս ունեցան իրենց հավատափոխ հայերը (Վ. Թուրիկյան, էջ 80): Ամերիկացի միսիոներներին մի փոքր ուշացումով միացան նաև Անգլիայի միսիոներները (իմ ին՝ դժ, փոքրիկ Հայաստան):

զնահատեցին այն իրողությունը, որ Հայ Առաքելական Եկեղեցին հայ ժողովրդի համար կատարում էր թե՛ պետության և թե՛ Եկեղեցու դերը: Նրանք չըմբռնեցին, որ հայկական այս փորձառությունն իր նմանօրինակը չունի եվրոպական ժողովուրդների մոտ... և ինչ որ սպառնալիք հանդիսացավ եկեղեցուն, այն սպառնալիք համարվեց նաև հայ ժողովրդին»³⁰:

Փաստորեն թուրքերը, ի դեմս ամերիկյան միսիոներների և մոդեռնիստների, գտան հիանալի գործընկերներ՝ հայերին պառակտելու և հա-վատափոխ անելու՝ փոխանակ միսիոներների սկզբնական այն հայտարարության, թե իբր իրենք, հայերի օգնությամբ, կամենում են քրիստոնյա դարձնել թուրքերին և հրեաներին:

Միսիոներները սկսեցին կազմակերպել «ավետարանչական» պաշտա-մունքներ: Գործի դրվեց նաև նյութական օգնության գործոնը, որից Աստված և հայրենիք մոռացած շատ հայեր սկսեցին հարել միսիոներներին³¹⁻³²:

Այս և վերը նշված պատճառով «ամերիկացի միսիոներների շարժ-

³⁰ Վ. Թութիկեան, էջ 28:

³¹ Նույն տեղում, էջ 29:

³² «Բողոքականք նաև իրենց մէջ հաստատած ընկերութեանց միջոցով մոլորութիւնը տարածելու համար մեծ փոյթ ունին, դրամ կը ժողովեն և այդ դրամով կապրին նոցա քարոզիչները, այդ դրամով կըթակարդուին շատ անմեղ հոգիներ բողոքականութեան մէջ, և այդ դրամ կըհամարուի նոցա համար ուրացութեան գին, դատապարտելի գործ, որ քրիստոնէութեան մէջ սնուած և զարգացած մարդկանց կը տանի ի հոգեվաճառութիւն և ի հաւատուրացութիւն:

Նորահնար մոլար վարդապետութեամբ շարադրած գրքեր կը տարածեն ամեն տեղ. ձրի կը բաժանեն և շատերին աննշան գնով կը տան. քրիստոնեայ ազգաց մէջ մտնելով ժողովուրդը կը խռովեն և կը յուզեն. ի՞նչ գեղեցիկ ընթացք. ավետարանի խաղաղարարը հոգւոյն համապատասխան գործ:

Այսպիսի ճանապարհաւ կը ցրուեն եկեղեցիներ՝ և ժողովուրդը մոլորեցնելով իրանց կը սեպհականեն. ժողովարաններ կհաստատեն և ազգի և եկեղեցւոյ ուրացեալ անդամները, նոյն ժողովարանի գլուխ և քարոզիչ կարգելով առատ թոշակ կը տան, որպէս զի խարդախութեամբ և նենգութեամբ իրենց համազգայինները որսան, գայթակղեցնելով նոցա ցրուեն և բաժանեն իրանց ուղղափառ եկեղեցիէն, վա՛յ աշխարհի գայթակղութեանց, հարկ է գալ գայթակղութեան, բայց վա՛յ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն (Մատթ. 18.17)»:
(Արիստակէս եպիսկոպոս Դաթեան «Աղանդաւորք», Վաղարշապատ, 1891, էջ 31-32):

³³ Վ. Թութիկեան, էջ 31:

առիթները լրջորեն կասկածի են ենթարկվել և խստորեն քննա-դատվել են մի շարք հայ պատմագետների կողմից: Այս պատմագետները կփաստարկեն, թե միսիոներների շարժառիթը Ավետարանը տարածելուց առավել ամերիկյան բողոքականության տարածումն էր, այսինքն՝ հավատափոխությունը»³⁴:

Ապացույցը իրենց պտուղն է՝ հայ բողոքականության առաջացումը: Անշուշտ, ամերիկյան միսիոներները որոշ նյութական ծառայություն մատուցեցին հայ ժողովրդին և այստեղ չենք նշում հաճախ որպես ծառայություն հիշվող կրթական, մշակութային *«աջակցությունը»*, որն ամենամեղմ բնու-թագրմամբ կարելի է անվանել ոչ այլ կերպ, քան *«արջի ծառայություն»*: Ամերիկյան կրթական կործանարար վտանգը տեսնելով՝ Եկեղեցու առաջ-նորդները ծնողներին հրահանգեցին հետ պահել իրենց զավակներին ամերիկյան դպրոցներից³⁴: Սակայն այդ նյութական օգնության հիշողու-թյունն էլ ի չիք է դառնում, երբ տեսնում ես նրանց հասցրած հոգևոր վնասը, որը հոգևոր աղետ, հոգևոր եղեռն կարելի է անվանել, և այն շարունակվում է մինչ օրս: **«Եղեռն»** եզրը օգտագործելը պատահական չէր, որովհետև բողոքական դառնալով և բողոքականության մեջ մեռնող հազարավոր հայորդիներ իրենք իրենց դժոխքի կրակին դատապարտեցին, մի ցավալի երևույթ, որ շարունակվում է նաև մեր օրերում:

Արջի ծառայությունների թվում կարելի է նշել նաև հայերի մեջ *Ֆեմի-նիստական շարժմանը* խթանելը, ինչպես նաև գրաբար լեզվի հետզհետե էլ ավելի հետ մղմանը նպաստելը³⁵, որին դեմ էին Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետությունը և պահպանողական աշխարհիկ շատ մտավորականները:

«ԻՆՔՆ ԻՐ ՄԵՋ ԲԱԺԱՆՎԱԾ ԱՄԵՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԵՐՎՈՒՄ Է,

³⁴ Նույն տեղում, էջ 39:

³⁵ Եթե ավետարանական «բարենորոգիչները» 19-րդ դարում հայտարարում էին, որ գրաբարը արդեն մեռած լեզու է և ամեն ինչ անում էին, որպեսզի իրոք այն սպանեն, ապա այժմ «Ամերիկայի հայ ավետարանականների ընտանիքների ավելի քան 90 տոկոսում (ժամանակակից) հայերենը մեռած լեզու է» (*Վ. Թուրիկյան*, էջ 306) և այն փոխարինվել է ավելի «բարենորոգված և արդիական» լեզվով՝ անգլերենով:

**ԵՎ ԻՆՔՆ ԻՐ ՄԵՋ ԲԱԺԱՆՎԱԾ ԱՄԵՆ ՔԱՂԱՔ ԿԱՍ ՏՈՒՆ
ԿԱՆԳՈՒՆ ՉԻ ՄՆԱ...»³⁶**

Հենց առաջին իսկ օրերին նորաթուխ հայ բողոքականների մեջ աստվածաբանական տարածայնություններ սկսվեցին, ինչը բնորոշ է բոլոր աղանդավորներին, և հետագայում այդ տարածայնությունները նրանց մեջ պառակտումների առիթ հանդիսացան:

Նրանք անվիճելի էին համարում հետևյալ հերձվածողական դրույթները. միայն հավատով, (*առանց գործերի*) փրկությունը, բոլոր հավատացյալ-ների քահանայությունը, Եկեղեցու Սուրբ Ավանդության մերժումը և վարդա-պետական հարցերում անձնական դատողությունների իրավունքը, որը և պատճառ դարձավ նորանոր հերձվածների ծնունդի, որն էլ իր հերթին նպաստեց հայ ավետարանականների հետագա պառակտմանը:

Հենց սկզբից ավետարանականները, բողոքական լինելով, բնականաբար, ժամանակի ընթացքում որդեգրեցին բողոքական շատ այլ վարդապետություններ: Նրանք նաև իրենց համար նոր հավատամք կազմեցին, որն անվանեցին *«հավատքի խոստովանություն»*, որն իրենից բողոքական հերձվածխոսության մակարդուկ էր ներկայացնում: Այն, ի թիվս այլ պնդումների, մերժում էր փրկության մեջ հավատին զուգահեռ նաև բարի գործերի, ապաշխարության անհրաժեշտությունը՝ պնդելով, որ միայն հավատը բավական է՝³⁷ հակառակ Ասվածաշնչում միանշանակ դրա անհրաժեշտության պնդմանը. **«Եղբայրներ իմ, օգուտն ի՞նչ է, եթե մեկն ափ, թե հավատ ունի, սակայն հավատն արտահայտող գործեր չունենա: Մի՞թե հավատը նրան կկարողանա փրկել»** (Հակ. 2.14), **«...հավատը առանց գործերի մեռած է»** (Հակ. 2.17),

«Դու հավատում ես, որ մեկ է Աստված, լավ ես անում: Դևերն էլ են հավատում և դողում: Ո՛վ փուչ մարդ, ուզո՞ւմ ես իմանալ. հավատը դատարկ բան է առանց գործերի: Աբրահամը՝ մեր հայրը, չէ՞ որ

³⁶ ՄԱՏԹ. 12. 25:

³⁷ Եթե նույնիսկ այս պնդումը ճիշտ լիներ. միևնույն է, նրանք մոլորվում էին, քանի որ հավատ ասելով պետք է նկատի ունենալ Ուղղափառ Սուրբ Հավատը, քանի որ ամենքն էլ ինչ-որ բանի հավատում են. նույնիսկ աթեիստներն են հավատում. հավատում են դևի այն ներշնչանքին, որ Աստված չկա:

գործերով արդարացավ՝ սեղանի վրա հանելով իր որդուն՝ Իսա-հակին, որպես զոհ: Տեսնո՞ւմ ես, որ հավատը գործակից եղավ նրա գործերին, և գործերով էլ հավատը կատարյալ դարձավ: Եվ կատար-վեց Գրվածը, որն ասում է. «Աբրահամը հավատաց Աստծուն, և այդ նրան որպես արդարություն համարվեց, և նա Աստծուն բարեկամ կոչվեց»:

Տեսնո՞ւմ եք, որ գործերով է արդարանում մարդը և ոչ թե միայն հավատով... Ինչպես որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործերի» (Հակ. 2.19-26):

«Այսուհետև ապաշխարության արժանի պտուղներ գործեցեք...» (Մատթ. 3.8):

Եվ բազում այլ համարներ, որ եթե մեկը կույր չէ, ինքը կարող է տեսնել, և եթե միտքը դեռ լրիվ խավարած չէ, կարող է հասկանալ, որ.

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ Է ՈՒՂԱՓԱՌ ՀԱՎԱՏԸ³⁸

ԵՎ ԱՅՂ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏԻ ԿՐԱ ԿԱՌՈՒՑԱԾ ԳՈՐԾԵՐԸ³⁹:

Հավատով ենք տեսնում Աստծուն և սուրբ գործերով մոտենում Նրան: ... Նախ հավատն է, ապա գործերը, քանզի հավատը հիմքն է, գործերը՝ շինվածքը, հավատը գլուխն է, և գործերը՝ ողջ մարմինը: ... Հավատը առանց գործերի սոսկ անուն է և ոչ իր: ... Եվ ինչպես որ հավատը մեռած է առանց գործերի, այդպես էլ գործերն առանց /Ուղղափառ/ Հավատի ունայն են, քանզի գործերը ճշմարիտ Հավատով են արդյունավորվում, նաև հույսով ու Աստծո սիրով: ... Հավատի կենդանությունը գործն է: ... Եվ ինչպես թռչունը չի կարող մեկ թևով թռչել, այլ երկու՝ այնպես էլ քրիստոնյան չի կարող թռչել մեկ թևով՝ հավատով կամ գործով, այլ թռչելու համար անհրաժեշտ են

³⁸ Աստծուն ուղիղ, ճշմարիտ ձևով ճանաչելը, դավանելը և պաշտելը, քանզի Աբրահամը հավատաց Աստծուն, ուղղափառ ձևով ճանաչեց և դավանեց Միակ ճշմարիտ Աստծուն (նրա շրջապատի մարդիկ էլ ինչ-որ աստծու կամ աստվածների հավատում էին):

³⁹ Ճմարիտ գործերով էր, որ Աբրահամի հավատը կատարյալ եղավ, ու դա նրան արդարություն համարվեց և Աստծու բարեկամը եղավ:

երկու թևեր...,- ասում է սուրբ Գրիգոր Տաթևացին:⁴⁰

Մենք մի փոքր կանգ առանք այս մի օրինակի վրա, որպեսզի ցույց տանք, որ ընդամենը մի օրինակը բավական է տեսնելու համար, որ ավետա-րականները ինչքան էլ պատեհ և անպատեհ հայտարարեն, թե իրենք հիմնվում են միմիայն Աստվածաշնչի վրա⁴¹, դա ընդամենը կեղծիք է և բացահայտ սուտ, իսկ ստախոսների, մոլորեցնողների, գայթակղեցնողների բաժինը դևերի հետ է լինելու, որովհետև ում ծառայեցին, նրա հետ էլ լինելու են:

Ավետարան/չ/ականները արհամարհում են Եկեղեցու Հայրերի կողմից Սուրբ Հոգով արված Աստվածաշնչի մեկնությունները, նրանցից յուրաքանչյուրն իր սեփական մեկնությունը ունի, յուրաքանչյուրն ըստ իր «նախա-սիրությունների» է մեկնություններ անում: Այս երևույթը կարելի է անվանել «Մեկնողական բռնություն Սուրբ Գրքի հանդեպ»:

Իրենց «Հավատքի խոստովանությամբ» ավետարականները մերժում են Առաքյալների և Սուրբ Հայրերի Աստվածային Հայտնությամբ (ինչպես Աստվածաշունչը) տրված Սրբազան Ավանդությունը: Մերժում են Եկեղեցու նվիրապետությունը՝ համարելով, որ բոլոր քրիստոնյաները քահանաներ են, սակայն այդ ասելու հետ մեկտեղ՝ նրանց, ովքեր ստացել են հովվական հատուկ դաստիարակություն «ծեռնադրում են» հովիվ⁴²:

Մերժում են Եկեղեցու Յոթ Խորհուրդները, բայց միաժամանակ նրանց «պատվելիները»⁴³ աշխարհիկ մարդիկ, «մկրտում են»⁴⁴ և

⁴⁰ «Չմեռան Հատոր», էջ 454:

⁴¹ Ավետարանականները սիրում են պատեհ-անպատեհ, մարգարեի կամ լավագույն դեպքում ուսուցչի կերպարի մեջ մտած, առատորեն մեջբերումներ անել Սուրբ Գրքից՝ առանց հասկանալու դրանց բուն իմաստը: **Սուրբ Գրիգոր Աստվածաբանը** նմանատիպ մեջբերումների մասին ասում է. «Առաքելական խոսք, սակայն, ոչ առաքելական ճևղակ հասկացված և ասված» (Տե. Գրիգորի Բոգոսլոբ. Творения, Т.2, М. 1994, с.17):

⁴² Վ. Թութիկեան, էջ 169, ինչպես նաև օրինակ՝ «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի» եռամսյա հանդես, 2001թ., թիվ 1, էջ 12-13:

⁴³ Հետաքրքիր է իմանալ, թե ավետարանականները ինչ մղումներով և շարժառիթներով են ընտրել հատկապես հենց այս բառը: Գուցե՞ դարձյալ Ավետարանից

«հաղորդ-դրություն տալիս»՝ դրա տակ բնավ որևէ խորհուրդ չտեսնելով և նկատի չունենալով այն, ինչ այդ բառի տակ հասկանում ենք մենք, մերժում են սրբերի բարեխոսությունը⁴⁵, Պատարագներով, ողորմություններով, աղոթքներով ննջեցյալներին օգնելը, ննջեցյալների համար արվող հոգեհանգստի պաշ-տոնը⁴⁶:

Այդ դրույթների և հնօրյա դիվական պավլիկյան ու թոնդրակյան պիղծ աղանդի ուսմունքների շատ կետերի հետ ունեցած նույնությունը ապշեցուցիչ է: Երկուսում էլ զգացվում է սատանայի (որ թարգմանվում է ապստամբ, հակառակորդ) չար ոգին: Իրենք ավետարանականները ավելին են պնդում. նրանք իրենց ակունքները տեսնում են պավլիկյանների և թոնդրակեցիների աղանդի մեջ. «պավլիկյան-թոնդրակեցիների մնացորդների և եվրո-պական բողոքականության ազդեցության տակ 18-19 դարերում այդ-պիսի միտումները /հակաեկեղեցական/ ավելի որոշակի են դառնում և իրականության մեջ վերածվում ավետարանական հոսանքի: Հետագայում այդ անհատները /հակաեկեղեցական նորաթուխ պավլիկյան-ները/ դարձել են հայ առաջին ավետարանական համայնքների... հիմքը, սկզբնական

մեջբերումներ անեն, այս բառի օգտագործելու «ավետարանական ավանդությունը» արդարացնելու համար:

⁴⁴ Սուրբ Կիպրիանոս Հայրապետը այդ առիթով գրում է. «Այդ ծնունդը /մկրտությունը աղանդավորների մոտ/ որդի է տալիս ոչ թե Աստծուն, այլ սատանային»: Իսկ սուրբ Աթանաս Մեծը գրում է. «Տերը այն բանի համար մեզ պատվիրեց ոչ թե պարզապես մկրտել, այլ նախ ասաց՝ սովորեցրե՛ք /աշակերտ դարձրե՛ք – Մատթ.28.19/ և միայն հետո՝ մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով / Մատթ.28.19/, որպեսզի ուսուցումը նախ արթնացնի ճշմարիտ հավատ, իսկ հետո հավատը ամբողջանա մկրտությամբ: Սակայն շատ հերետիկոսներ, միայն խոսքեր են ասում, սակայն մտածում են ոչ ճիշտ, ոչ այնպես, ինչպես /դրանք/ ասված են, չունեն նաև առողջ հավատ, այդ պատճառով էլ ջուրը, որ նրանք տալիս են, անօգուտ է, դրան չի հերիքում բարեպաշտությունը, հետևաբար նա, ով լվացվում է նրանով /մկրտվում հերետիկոսների մոտ/,ավելի է իրեն պատում անարգությամբ...» /Սբ. Աթանաս Մեծ, հս.26 Against Arians, Second Oration/:

⁴⁵ Սրբերի բարեխոսության մասին տե՛ս. Ծննդ. 18.20-33, Ելք 32.13-14, Երեմիա 15.1, Չաքարիա 1.11-12, Բ. Օրին. 9.18, 9.26-29, Բ. Մնաց. 6. 16-47, 30.19, Հոբ 5.1, 42.7-9, Գ-անիել 3.35-36, 10.12-13, Մատթ. 18.10, Հռոմ. 15.30-32, Եփես. 6.18-20, Կող. 4.3, Բ. Թես. 1.11-12, 3.1-2, Եբր. 13.18, Հակ. 5.13-18 և այլն: Այս բոլորը վերջնականապես իմաստավորվում է Դուկ. 20.38-ով:

⁴⁶ Տե՛ս Բ Մակաբայեցւոյն 12.43-46: Իսկ սուրբ Հովհան Ոսկեբերանը ասում է. «Մի՛ հապաղեք հիշատակել ննջեցյալներին՝ աղոթք մատուցելով նրանց համար, քանի որ բոլորս մի մարմին ենք Քրիստոսի մեջ և Նրա անդամները»:

տարրը»⁴⁷:

ԲԱՐԵՆՈՐՈԳԶԱԿԱՆ, ԱՎԵԼԻ ԲԱՐԵՆՈՐՈԳԶԱԿԱՆ...

Ավետարանականները որդեգրել են վարդապետական հարցերում մարդու կարծիքի ազատության և Սուրբ Գիրքը բոլորի կողմից մեկնվելու իրավունք ունենալու բողոքական կործանարար սկզբունքը: Դարձյալ մոռանալով կամ չուզենալով հիշել **Պողոս Առաքյալի** խոսքը. **«Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Անունով, որ բոլորդ էլ նույն խոսքը ունենաք և ձեր մեջ բաժանումներ չլինեն....»** (Ա Կոր. 1.10) : Արդյունքը կանխատեսելի էր և իրեն շատ ուշացնել չտվեց. շեղվելով Առաքյալների և Սուրբ Հայրերի մատնանշած Արքունի Փրկարար Ուղղա-փառ Ճանապարհից՝ ավետարանականներից ամեն մեկն, իրեն առաքյալ կամ նվազագույնը սուրբ համարելով, սկսեց **«ուսումնասիրել»** Աստվածա-շունչը⁴⁸, զբաղվել հոգևոր մտավարժանքներով և, բնականաբար, յուրա-քանչյուրը ըստ իր մեղքերի, ըստ իր կրքերի, ըստ իր մտքի տիպատության՝ շեղվելով ընկալ դևի պատրաստած որոգայթները: Արդյունքում աշխարհում որքան ավետարանական գոյություն ունի, նույն այդքան էլ Աստվածաշնչի ավետարանական եղծված մեկնություն և վարդապետություն:

Առաջին համաշխարհայինից հետո, այսպես կոչված, **«ավետարանա-կան եկեղեցու»** մեջ առաջ եկան նոր ուղղություններ, որոնք իրենց անվանեցին **«հայ եղբայրության եկեղեցիները»**: Սրանք արդեն ավե-տարանականների մեջ էին ուզում բարեկարգումներ մտցնել: Դրանցից առաջինը հիմնվեց Հալեպում (Սիրիա), **1924 թվականին**⁴⁹: Վերջիններս, տարածվելով Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Հարավային Ամերիկայում և Միացյալ Նահանգներում,

⁴⁷ Ղազարյան, Լևոնյան, էջ 24:

⁴⁸ «Ինչպես առանց նավի անհնար է անցնել ծովը և հասնել բարեհանգիստ հանգրվանի, այնպես էլ առանց Ուղղափառ Եկեղեցու վարդապետությանը հնազանդվելու հնարավոր չէ հոգու փրկության հասնել: Նրան սիրիք ինչպես մոր, նրան հնազանդվիր, և վախեցիր Աստծո Խոսքը ըստ քեզ մեկնել /հասկանալ/: Նրան են տրված խելամտության բանալիները, նա է միակը՝ անսխալական մեկնիչը: Հիշի՛ր. «Ում համար Եկեղեցին մայր չէ, այդպիսինին Աստված Հայր չէ»»: Սուրբ Կիպրիանոս Հայրապետ:

⁴⁹ Վ.Թոթիկեան, էջ 101, 155:

բաժանումներ մտցրին ավետարանա-կանների մեջ⁵⁰:

«Աստվածաբանական» թեժ վեճեր էին ընթանում նաև եղբայրական-ների մեջ, և չէր անցել նույնիսկ վեց տարի, երբ եղբայրության երկու առաջնորդների՝ Աբրահամ Սեֆերյանի և Մինաս Պողոսյանի միջև վեճերը իրենց լուծումը չգտնելով՝ հանգեցրին եղբայրության տրոհման:

Որոշ ժամանակ անց փոխադարձ քննադատությունների հետևանքով ավետարանականները դարձյալ տրոհվեցին: Այս անգամ հենց իրենք՝ ավե-տարանականները, չհանդուրժելով քարոզիչ Համբարձում Համբարձում-յանի ազատական գաղափարները, արտաքսեցին նրան, որն իր համախոհ-ների հետ միասին հեռացավ և իր ուղղությունը անվանեց «*հայ ավետարանական ժողովական եկեղեցի*»⁵¹:

Որոշ «ազատախոհ» հայ ավետարանականներ այնքան առաջ գնացին, որ նույնիսկ իրենց իսկ հակասելով՝ սկսեցին վիճարկել Աստվածաշնչի բացարձակ և անվիճելի հեղինակությունը⁵²: Եվ դա սպասելի էր, քանի որ ով ապստամբում է Եկեղեցու դեմ /ծածուկ ապստամբելով Աստծու դեմ/, հաջորդ քայլով բացահայտ պիտի ապստամբի Աստծո դեմ:

Նրանցից ոմանք նույնիսկ չեն հավատում Քրիստոսի Հարությանը⁵³, բացահայտ ընդդիմանալով Սուրբ Գրքին, մոռանալով Պողոս Առաքյալի խոսքերը. «... որովհետև ես ձեզ ավանդեցի նախ այն ինչ ես ինքս ընդունեցի. թե՛ Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար՝ ըստ Գրքերի և թե՛ թաղվեց և թե՛ հարություն առավ երրորդ օրը՝ ըստ գրքերի...», (Ա Կոր. 15. 3,4) և «Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, ի զուր է ձեր հավատը, և տակավին նույն մեղքի մեջ եք... Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Քրիստոս, ողորմելի ենք քան բոլոր մարդիկ: Բայց արդ, մեռելներից հարություն է առել Քրիստոս...» (Ա Կոր. 15. 17-20)

Տարածայնություններ ունեն նաև Քրիստոսի երկրորդ գալստյան շուրջ⁵⁴: Տարածայնություններ ունեն և մարդու փրկագործության հետ

⁵⁰ Նույն տեղում, էջ 67, 155:

⁵¹ Նույն տեղում, էջ 155-157:

⁵² Նույն տեղում, էջ 155:

⁵³ Նույն տեղում, էջ 162:

⁵⁴ Նույն տեղում, էջ 163:

անմիջական առնչվող բազում հարցերի շուրջ:

Տարածայնություններ կան նաև ավետարանականների և նրանց «ծնող-մեղի»՝ ամերիկյան միսիոներների միջև⁵⁵:

Նույնիսկ իրենց կազմած «Սահմանադրության» մեջ էլ կրկին նշելով, որ իրենց համար հիմք է միայն Աստվածաշունչը, Աստվածաշունչին դարձյալ դեմ են գնում, ինչպես վերը ասեցինք՝ նշելով որ խորհուրդները երկուսն են՝ մկրտությունը և հաղորդությունը՝ բնականաբար դրա տակ որև խորհուրդ բառի բուն իմաստով չընդունելով⁵⁶: Ավետարանականները սրբապղծորեն համարում են, որ Հաղորդության ժամանակ լույս հաց և գինի է տրվում՝ հակա-ռակվելով Քրիստոսի խոսքերին. «Հիսուս Հացը վերցրեց, օրհնեց ու կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առե՛ք կերե՛ք, այս է Իմ Մարմինը»: Եվ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանաց ու ասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է Նոր Ուխտի Իմ Արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. 26.26-28): Ավետարանականները, այս կերպ մոլորվելով, բնականաբար հեռու են փրկությունից, քանզի մեր Տիրոջ անսուտ խոսքն է. «Ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ, Եթե չուտեք մարդու Որդու մարմինը և չմաքեք նրա արյունը, ձեր մեջ կյանք չէք ունենա: Ով ուտում է իմ մարմինը և ըմպում իմ արյունը, հավի-տենական կյանք ունի. և ես նրան վերջին օրը հարություն առնել պիտի տամ, քանի որ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, և իմ արյունը՝ ճշմարիտ ըմպելիք...» (Հովհ. 6.54-56): Այսօր էլ՝ մոտ 2000 տարի անց, Առաքելական Սուրբ

⁵⁵ Նույն տեղում, էջ 74:

⁵⁶ Եկեղեցու բոլոր Խորհուրդները մեզ են հասել Եկեղեցու Ավանդությամբ (Առաքյալներից և Առաքելական Հայրերից) և ունեն սուրբգրային հիմք, օրինակ. **Մկրտության Խորհուրդը**՝ Մատթ. 28.19, Մարկ. 16.16, Դուկ. 22.19, Հովհ. 3.5, Գործք 2.38, և այլն: **Գրոշմ Խորհուրդը**՝ Գործք 8.14-17, 19.5-7, Բ Կորնթ. 1.21-22, Եփես. 1.13, 4.30, Ա Հովհ. 2.22,27, և այլն: **Հաղորդություն**՝ Մատթ. 26.26-29, Մարկ. 14.22-25, Դուկ. 22.19-20, Հովհ. 6.51-52, 6.54-58, Ա. Կորնթ. 10.16-17, 11.23-29, Գործք 2.42,46, 20.7,11 **Ապաշխարության Խորհուրդը**՝ Մատթ. 18. 18, Դուկ. 13.1-5,18.9-14, Հովհ. 20.21-23, 9-14, Հռովմ 2. 4, Գործք 14.22, Ա. Տիմ. 4.14 և այլն, **Պատկի** մասին Սուրբ Գիրքը բազում տեղեր ներկայացնում է որպես Խորհուրդ՝ Ծննդ. 1. 27-28, Մատթ. 19. 5-6, Մարկ. 10.6-9, Եփես. 5. 21-23 և այլն: **Չեղնադրություն**՝ Մատթ. 28.19-20, Դուկ. 22.19-20, 24. 50, Հովհ. 20.21-23, Գործք. 6. 6, 13.2-3, 14.22, Ա Տիմ 4.14, Բ Տիմ 1.7, **Վերջին Օծում կամ Կարգ Հիվանդաց**՝ Մատթ. 10. 1, 8, Մարկ. 6. 12-13, Հակ. 5.14-15: Համարները բերում ենք այն մարդկանց համար, որոնք առանց համարի ոչինչ ընդունակ չեն հասկանալու (ցավոք՝ նաև երբեմն համարը նշելուց հետո ևս):

Եկեղեցում Պատարագի ժամանակ կարելի է ճաշակել Քրիստոսի Կենդանարար Մարմինը և Արյունը Սուրբ Հաղորդությանը:

Ավետարանականները խակամտորեն իրենց հաճելի ձևով են մեկնում, չեն ընդունում եկեղեցու նվիրապետությունը և ձեռնադրությունը, Որի սկիզբը դրեց մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ Սուրբ Եկեղեցին հիմնելով և Իր Առաքյալներին Ձեռնադրելով և Եկեղեցու հովիվներ կարգելով, որոնք էլ իրենց հերթին ձեռնադրեցին իրենց հաջորդներին, և այդ Ձեռնադրություն-Շղթան առանց ընդհատվելու **Թաղեսու Առաքյալից** հասավ մինչև **Սուրբ Գրիգոր Լուսավորիչ** և նրանից հետո մինչև մեր օրերը⁵⁷: Ավետարանականները անտեսում են Ձեռնադրության Խորհուրդը՝ միևնույն ժամանակ հովիվներ «*ձեռնադրելով*» և նրանց կողմից ջրով «*մկրտվելով*» և անտեսելով **Սուրբ Մյուռոնը (Դրոշմի Սուրբ Խորհուրդը)**, Մյուռոն, որը **սուրբ Գրիգոր Նարեկացին Խնկելի, Պաշտելի և Երանելի է անվանում**, Որը մեզ վրա հեղվելով /մկրտության /Դրոշմի/ ժամանակ՝ օծում է մեր արտաքին խորանը և աներևութաբար մտնելով /մեր մեջ/ նորովի կենդանա-ծնում է մեր ներքին մարդը, Որի օրհնությամբ է, որ մարդիկ քրիստոնյա են դառնում և Աստծուն ընծայվում, Նրա որդի դառնում, և Մյուռոնով չօծվածը մարդը հեշտությամբ խորտակվում և Աստծուն անհաղորդ լինելով՝ չի լուսավորվում («Աղոթամատեան», բան ԴԳ): «Ինչպես առանց Քրիստոսի Արյան և Խաչի չկա փրկություն, նույնպես և առանց Աստվածային այս Մյուռոնի չկա հարություն և որդեգրություն Հայր Աստծուն: Ինչպես Հացի և Գինու Խորհրդի (Հաղորդության) միջոցով աներկբայորեն հավատում ենք, որ Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արյունն ենք ճաշակում փրկության համար և Սուրբ Ավագանի Ջրի մեջ ծնվում իբրև Աստծո որդիներ, այդպես էլ Աստվածագործ Մյուռոնի օծումով ստուգապես հավատում ենք, որ սրբագործ այս Յուդի միջոցով Սուրբ Հոգին հանգչում է մեր մեջ, ստանում ենք հավիտենական կենդանություն և Աստվածային որդեգրության Կնիք՝ համաձայն Պողոս Առաքյալի՝ թե. «Որդեգրության Սուրբ Հոգին ստացանք, որով աղաղակում ենք Աբբա՝ Հայր» (Հռովմ. 8.15)» (Սուրբ Գրիգոր Տաթևացի «Քարոզ Եկեղեցու Յոթ Խորհուրդների մասին»): Սուրբ Մյուռոնի զորությամբ բազում հրաշքներ են կատարվել Հայոց աշխարհում: Ավետարանականները անտեսում են Սուրբ

⁵⁷ Այդ մասին ավելի մանրամասն տես օրինակ՝ *Մեսրոպ արք. Աշճեան* «Լուսավորչի սուրբ նշխարները», Էջմիածին, 2000 թ. գրքում:

Եկեղեցին՝ Տաճարը, որը Սուրբ Հայրերի բնութագրմամբ Մեր Մայրն է *(առանց Որի ոչ ոք չի կարող Աստծուն որպես Հայր ունենալ)*, Աստծո և հրեշտակների բնակարանն է ու մարդկանց քավարանը, Սուրբ Վերնատունն է, Նոյան Տապանն է, Իմանալի Դրախտն է, Երկինքն է երկրի վրա..., որի մասին Պողոս Առաքյալը իր սիրելի աշակերտ Տիմոթեոսին գրում է. «...Իսկ եթե ուշանամ, դու կիմանաս, թե ինչպես վարվես Աստծո Տան մեջ, որ Կենդանի Աստծո Եկեղեցին է՝ Սյուն և Հաստատություն Ճշմարտության» (Տիմ 3.15) : Աստծո Սուրբ Տաճար, Որը սուրբ Նարեկացին Աստվածամոր հետ է համեմատում... որ «**Թեև կառուցվել է այն քարից և հողից և մարդու ձեռքով, սակայն մեծ է, քան մարդը: Ոչ թե կառուցվել է մարդու կամայականությամբ, այլ Աստծո Միածին Որդին է նրան հովանավորում Սուրբ Հոգով⁵⁸**», և Աստված Ինքը մեզ տեսանելի է Եկեղեցով. «**Երկնքից ներքև և արեգակի դիմաց ոչ ոք չի կարող համարձակվել այս ահավոր Խորհրդին /Հաղորդությանը/ սպասարկել, առանց Եկեղեցու թևերի ներքո հովանավորվելու**»: Եվ վերջապես. «**Իսկ եթե մեկը հանդգնաբար չարության ձեռք ուղղի դեպի վերին առաքելություն՝ Եկեղեցին համարելով մարմնավոր ստեղծված կամ մարդկային հնարք, այլ ոչ թե աստվածային Հոգու պարզ և Քրիստոսի Առաքյալների ձեռքի բարեհանձար հիմնադրություն և դուռ Երկնքի և Կենդանի Աստծո քաղաք, ապա այդ չընդունողներին մերժում է իր երեսից ամենա-սուրբ Հայրը՝ նրանց դիմաց փակելով Եկեղեցու՝ դեպի կյանք տանող դռները և նրանցից վերցնելով փառակից Հոգու շնորհները**»:

Ավետարանականները, այլ հերձվածողների նման, նրանց հետ ձայն ձայնի տված անտեսում են նաև Սրբերի և Ամենօրինյալ Սուրբ Կույս Աստվածածնի բարեխոսությունը, սրբեր, որոնք Հաղթանակած Եկեղեցին են և հրեշտակների գնդերի հետ միասին մեզ համար բարեխոս ու օգնակն են և հազարավոր ու միլիոնավոր անգամ իրենց տեսանելի և անտեսանելի օգնությունն են բերել մարդկանց⁵⁹: Իսկ Աստվածածնի մասին եթե գրվեր, ապա աշխարհի վրա չկա այնքան թուղթ և թանաք, որ կարողանա նրա պատվի գեթ մի փոքր մասը պատմել: Բավական է իմանալ, որ Երկնային Նվիրապետության մեջ Սուրբ Երրորդությունից հետո նա՛ է՝ բարձր քան հրեշտակները և հրեշտակապետերը, վեր քան Սերովբեները և Քերովբեները, Իր

⁵⁸ Սուրբ Գրիգոր Նարեկացի, «Մատյան Ողբերգության», Բան ՀԵ:

⁵⁹ Տե՛ս Սղմ. 67.36:

Միածին Որդու կողքին՝ անդադար բարեխոս աշխարհի համար, Կատարյալ Կույս և՛ հոգով, և՛ մարմնով, Կուսություն, որ չխախտվեց միածնին Որդին ունենալուց հետո, քանզի Որդին Աստված էր և ինչպես նա կուսությամբ հղացավ, այնպես էլ Որդին ունենալուց հետո ոչ միայն Կույս մնաց, այլև Կուսությամբ առավել գերազանց գտնվեց: Հայոց Եկեղեցին Սուրբ Աստվածածնին նվիրված բազում ճառեր, Ներբողներ և հատուկ Շարական-Մեծացուսցեներ ունի, որոնցում նրան մեծարում է՝ անվանելով Աստվածային Դրախտ, Եկեղեցու Հիմն, Սուրբ Հոգու Խորան, Անապական, Անարատ և Աստվածաբնակ Տաճար, Մաքուր Աղավնի, դևերի և սանդարա-մետականների համար ահարկու, Ամենաօրհնյալ, Ոսկի Բուրվառ... Առանց Աստվածամոր բարեխոսությունը խնդրելու, ոչ մի անգամ Եկեղեցում Պատա-րագ չի մատուցվում...

Ավետարականներից շատերը մյուս բողոքականների նման մերժում են մանուկներին մկրտելը: Նրանք ասում են. քանի որ երեխան չի հասկանում, թե ինչ է մկրտությունը, նա չի կարող մկրտվել: Եկեղեցու դիրքորոշումը այլ է. Մկրտությունը հոգևոր ծնունդ է, մի՞թե երեխան ֆիզիկապես ծնվելիս ամբողջ-ջապես հասկանում է, թե ինչ է իր հետ կատարվում, կամ մի՞թե դրա համար նրա համաձայնությունն է հարցնում որևէ մեկը: Իմանալ ինչ է օդը, իմանալ օդի բաղադրությունը, այլ բան է, շնչել նույն այդ օդը, բոլորովին այլ բան: Եկեղեցին գիտակցական հավատ պահանջում է չափահաս մկրտվողից: Հնում մեծահասակ մկրտվողները որոշակի երեխայացման (նախամկրտական) պատրաստման շրջան պետք է անցնեին...

Մեկ այլ հարցադրում. մի՞թե երեխաները Աստծուց կտրված են, մի՞թե նրանք պետք է մինչև մեծահասակ դառնալը Քրիստոսից հեռացած մնան: Չէ՞ որ ըստ Տերտուղիանոսի՝ մարդու հոգին իր բնությամբ քրիստոնյա է, և այն ձգտում է իր Արարչին: Հետևաբար արգելել մանկամկրտությունը, նշանակում է բռնաձև մանուկները կամքին, Կյանքի Աղբյուրին միանալու նրանց բնական պահանջին: Այլև Քրիստոսին հակառակվել է նշանակում. **«Թույլ տվեք այդ մանուկներին և մի՛ արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև երկնքի արքայությունը այդպիսիներինն է»** (Մատթեոս 19.14): Սակայն դեպի Քրիստոս տանող միակ դուռը այս է. **«Ճշմարիտ, ճշմարիտ են ասում քեզ, եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծո Արքայությունը մտնել»** (Հովհ. 3.5): Այս մասին մի հարց ևս. այդ ինչպես են այդքան «խելոք» բողոքականները որոշում, թե տվյալ անձնավո-

րությանը որ տարիքից կարելի է մկրտել...

Երեխաներին մկրտելիս Եկեղեցին երեխայի փոխարեն գիտակցված ուղղափառ հավատ է պահանջում երխայի ծնողներից և կնքահորից, որոնք էլ Աստծո առաջ պատասխանատու են երեխային քրիստոնեական դաստիարակություն տալու համար: Հնում մենք տեսնում ենք 40 օրյա մանուկների ընծայումը Աստծուն: Մի՞թե նրանք այդ տարիքում կարող էին ուխտ կապել Աստծո հետ, որ ամբողջ կյանքում կծառայեն Նրան (**տե՛ս Ելք 13.2, Ա Թագ. 1.28**): Ծնողները իրենց երեխաների փոխարեն խոստումներ էին տալիս նույնիսկ նախքան նրանց ծնվելը, և Աստված օրհնում էր նրանց մտադրությունները (**տե՛ս Ա Թագ, 1.11**): Նոր Կտակարանում էլ ենք ականատես լինում, թե ինչպես է Աստված ծնողի հավատով բուժում երեխային (**տե՛ս Մարկ 9.17-27, Հովհ. 4.46-53**): Քանանացին իր խնդրանքներով փրկում է իր աղջկան (**տե՛ս Մատթ. 15.22-28**), նմանատիպ օրինակներ տե՛ս նաև **Մատթ. 8, Մարկ 5, 2.5, Դուկ. 7...**): Շատերը գիտեն, որ Մկրտությունը իր նախատիպը, խորհրդական նախօրինակները ունի Հին Կտակարանում: Եվ այդ բոլոր օրինակների մեջ ներառված էին նաև երեխաները: Այդ օրինակներից է Կարմիր Ծովով անցնելը: Անցավ ողջ Իսրայելը, այդ թվում երեխաները: Պողոս Առաքյալը այդ մասին ասում է. «**Եղբայրներ, չե՛մ ուզում, որ անգիտանաք, որ մեր հայրերը բոլորն էլ ամափ առաջ-նորոգության տակ էին, և բոլորն էլ ծովով անցան. և բոլորը, հետևելով Մովսեսին, մկրտվեցին ամառ ու ծովի մեջ»** (**Ա Կոր. 10.1-2**): Ուրեմն, եթե հնում երեխան դառնում էր Աստծո ժողովրդի անդամ, մի՞թե նորում դա արգելվեց: Եկեղեցին Աստծո ժողովուրդն է, մի՞թե ժողովուրդը առանց երեխաների է լինում: Սուրբ **Գրիգոր Աստվածաբանը** այդ մասին ասում է, որ ինչպես հնում երբայեցի երեխաները ողջ մնացին դժներին քսված գառան արյամբ, այնպես էլ այժմ մահվան հրեշտակից երեխաները պաշտ-պանվում են Ճշմարիտ Գառան Արյամբ և Նրա կնիքով՝ Մկրտությամբ⁶⁰:

Բողոքականները ասում են, թե Ավետարանում չկա հստակ ցուցում երեխաներին մկրտելու մասին, բայց, կներեք, այնտեղ հստակ ցուցում չկա նաև, ասենք, կանանց և ծերերին մկրտելու մասին: Տերը ասաց, որպեսզի մկրտեն բոլորին (**տե՛ս Մատթ. 28.19**): Եվ նորկտակարանյան տեքստերում մենք այնպիսի իրադարձությունների ենք հանդիպում, որոնք ենթադրում են երեխաների մկրտությունը:

⁶⁰ *Св. Григорий Богослов. Творения, Т. 2, М. 1994, с. 37:*

Մկրտվեցին **Լիդիան** և իր ողջ տունը (**տե՛ս Գործք 16.15**): Պողոս Առաքյալը մկրտեց **Ստեփանոսի** ընտանիքը (**տե՛ս Ա Կոր. 1.16**): Մկրտվեց նաև բանտապետը և իր ողջ տունը (**տե՛ս Գործք 16.31-33**): **«Որովհետև խոստումը ձեզ համար է, ձեր որդիների և բոլոր հեռավորների համար»** (**տե՛ս Գործք 16.15**):

Ավետարանականները արհամարհում են սրբապատկերները՝ դրանով ընկնելով պատկերամարտության հերձվածի մեջ: Մեղադրելով մեզ կռա-պաշտության մեջ՝ չեն ուզում հասկանալ այն պարզ բանը, որ մենք ոչ թե նյութին ենք աղոթում, այլ սրբապատկերը հարգելով, աղոթում ենք նրանում պատկերվածին: Եվ պատկերը մեզ համար է՝ **«Պատճառ երկրպագության Համագո Երրորդության»**: Մոռանում են, որ հենց Աստված պատվիրեց երկու քերովբեներ պատրաստել և դնել Վկայության Տապանակի վրա (**տե՛ս Ելք 25.18,22**)⁶¹: Երուսաղեմի Տաճարի համար ևս երկու ոսկե քերովբեներ պատրաստվեցին, և բոլոր պատերի վրա նրանց պատկերներն էին արված (**տե՛ս Գ Թագ. 6.23,28-29**): Այդպիսի քերովբեներ էին արված նաև Սողոմոնի ավերված Տաճարի փոխարեն կառուցված երկրորդ Տաճարում (**տե՛ս Եզեկ. 41.17-25**): Եկեղեցու Ավանդությունը մեզ ասում է, որ Ինքը՝ Քրիստոս, իր Պատկերը Անձեռակերտ տպավորեց Դաստառակի վրա և այն ուղարկեց մեր **սուրբ արքա Աբգարին**: Ամենօրինյալ Սուրբ Աստվածածինն էլ իր վերափոխումից առաջ Առաքյալների խնդրանքով նրանց թողեց իր պատկերը, որից Աստվածամոր բարեխոսությամբ անհամար բժշկություններ և հրաշքներ էին լինում: Այդ պատկերը Բարդուղիմեոս Առաքյալը իր հետ Հայաստան բերեց: Այս ժամանակներից է պատկերահարգությունը հայոց մեջ: Եվ մի՞թե ավետարանականները իրենց ավելի իմաստուն են համարում...

Ավետարանականները անտեսում են կամ ըստ պատշաճի չեն ընդունում Քրիստոսի Սուրբ Խաչը: Սուրբ Խաչ, որը Տարսնացի Առաքյալի միակ պարծանքն էր. **«Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով»** (**Գաղ. 6.14**): Առաքյալի հաջորդ խոսքերը վերաբերում է Ավետարանականներին և մյուս աղանդա-վորներին. **«... որովհետև կորստյան մատնվածների համար խաչի քարոզչությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս**

⁶¹ Տե՛ս նաև Թիվ 21.8, Գ Թագ. 6.35, 7.25-36, 8.6-8, 10.19, Բ Մնաց. 3.10-14, 4.3, 5.7-10:

համար՝ Աստծո զորություն»» (Ա. Կոր 1.18) և «... շատերը, - որոնց մասին շատ անգամ ասել եմ ձեզ և այժմ էլ լավով եմ ասում, - ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի խաչի. նրանց վախճանը կորուստ է. նրանց աստվածը իրենց որովայնն է, և փառքը՝ իրենց ամոթը» (Փիլիպ. 3.18,19):

Սուրբ Դավիթ Անհաղթը իր նշանավոր Աստվածընկալ սուրբ Խաչի մասին ներբողում գրում է «...Այսուհետև արժանանանք հաղորդվելու սրան՝ համբուրելով այն ոչ իբրև սոսկ խաչ, այլ իբրև նույն Իրեն՝ այստեղ գամված Աստծո ահավոր զորությունը: Որովհետև իսկապես այստեղ է Նա, որովհետև ով սրա վրա էր, այժմ էլ սրա վրա է եւ սրա վրա պիտի լինի մինչեւ հավիտյան: Եվ եթե Հնի ու օրինակի ժամանակ այսպես է ասում. «Այս է հանգստավայրն իմ հավիտյանս հավիտենից, սրա վրա պիտի բնակվեմ, որովհետև հավանեցի սա» [Սաղմ. 131,14], որքան ավելի Նորում եւ ճշմարիտում այսպես կլինի»: Եվ շարունակում է Օրհնյալ ես, կենաց փայտ, իմանալի տապան, որ այս կենցաղի խեղդող ծովի ծփացող ալիքների միջից քեզ ապավինած հոգիներին թեթևորեն դեպի երկինք ես բարձրացնում... Օրհնյալ ես, աստվածագարդ սուրբ փայտ, ճշմարիտ տունն, որ քեզնից կախված գառով ոչ միայն Իսահակը, այլ Ադամի բոլոր ծնունդները փրկվեցին մահից... Օրհնյալ ես, կենաց փայտ, դեպի երկինք տանող իմանալի սանդուղք, որով զվարթունների դասերը մշտապես երկիր են իջնում եւ ելնում, եւ Տերը քեզ վրա հաստատվեց, որը Հակոբը հեռվից տեսավ եւ հրաշքից սոսկալով՝ Քո տեղը երկնքի դուռ, իսկ Բեթելը Աստծո տուն անվանեց... Օրհնյալ ես, սուրբ փայտ, իմանալի քարեղեն եւ քառանկյուն տախտակ, որի վրա ոչ թե մատներով տասնաբանյան դրոշմեց Աստված, այլ Սի-նայի փոխարեն Սիոնից Ինքը՝ անպարագրելի Աստված, ամբողջ աշխարհին շնորհեց ճշմարիտ աստվածձանաչողությունը...

Ներբողում նկարագրում է նաև Քրիստոսի Երկրորդ գալուստը. «...Արդ, ամեն բանով ամեն բանում օրհնյալ ես, սուրբ փայտ, որ ամենի նորոգման ժամանակ, երբ ամեն բան հրով փոփոխվի, երբ ավարտվի այն ահեղ, մեծ ու երեւելի Օրը, ուշացող Փեսայի երեւալու ժամանակ՝ վերջին գիշերը, դու երկնայինների առջեւից ընթացող կարապետ եւ հրավիրակ, ավետիսը կբերես երկնավոր Թագավորի գալստյան: Այնժամ անմատույց լույսով լուսավորելով աշխարհի չորս ծագերը՝ ճառագայթարձակ կծագես արեւելքից՝ իսպառ լռեցնելով լուսատուների կարծեցյալ ճաճանչները: Անտանելի փառքի լույսն

այնժամ քեզ վրա կերեալ՝ ի հանդիմանություն անհավատների եւ ի պարծանք հավատացյալների, ի դատապարտություն անսուրբների եւ ի գովու-թյուն բարեգործների: Եվ հարություն առած սուրբերին Քրիստոսով կենդանիների՝ Փեսայի լուսազգեստ բարեկամների հետ միասին հարսանյաց հանդես կիրավիրես: Իսկ մոլորվածների ու ծուլերի համար, որոնք չեն երկրպագում քեզ, անլույս ու հարակեզ հնոց կդարձնես հուրը, որով աջ ու ձախ կողմերի պիտի բաժանվեն...»:

Ավետարանականները մոռանում են, որ մեր ժողովուրդը դարեր շարունակ արյամբ է վկայել իր հավատարմությունը Սուրբ Խաչին, պատվել է Խաչը, դրանով պատվելով նույն Իրեն՝ Քրիստոսին⁶²: Խաչը Քրիստոսի Տնօրինական սխրանքի Փառապսակն է: Առանց Սուրբ Խաչի Եկեղեցում որևէ Խորհուրդ չի կատարվում: Մենք Սուրբ Խաչը փառաբանում և երկրպագում ենք, որովհետև նրա վրա թափվեց ճշմարտապես Մարմնացած և Մարդացած Աստծո Արյունը, Որի շնորհիվ Խաչը դարձավ Աստվածընկալ, դարձավ կենսաբեր, դարձավ քրիստոնյաների պարծանքը՝ ըստ Առաքյալի խոսքի: Այս պատճառով է Սուրբ Եկեղեցին երգում. «... Խաչը երկնավոր-ների ցնծությունն է և երկրավորների զվարճությունը: Խաչը սանդարամետականների սարսափն է և երկրայինների սաստողը: Խաչը հոգևոր զենք է և չբթացող սուր: Խաչը դժոխքի ավերողն է և գերյալներին ազատողը: Խաչը գերեզմանների կնիքն է և կյանքի հարությունը: Խաչը դրախտի դռները բացողն է և Արքայությունը որպես ժառանգություն տվողը: Խաչը Քրիստոսի կարապետն է և հարության հրավերը: Խաչը անհավատների կուրությունն է և հավատացյալների զորությունը, որը և երկրպագողներին պայծա-ռացնելով՝ կանգնեցնում է մեր Քրիստոս Աստծո աջ կողմում...»: Այս է պատճառը, որ Խաչը «... Կենաց ծառ է ամենքի համար, ովքեր պատսպարվում են Նրանով և հաստատությամբ հենվում Նրա վրա՝ իբրև Տիրոջ», - ասում է սուրբ Գրիգոր Տաթևացին և շարունակում. «Խաչը մեզ համար իմաստություն է իր զորությամբ, որովհետև այն տեսնելով՝ Նրանից անբաժան ենք ճանաչում Խաչվածին, ինչպես Ինքն ասաց. «Այս է իմ հանգիստը

⁶² «Որ պատու է զխաչն Քրիստոսի և զպատկեր նորին, զնոյն ինքն պատուեալ լինի զՔրիստոս», Հովհաննես Իմաստասեր Օճնեցի, Մատենագրութիւնք, 1834, էջ 55: Դրան հակառակ պավիլիկյանները, թոնդրակեցիները և այլ աղանդավորները պայքարում էին խաչապատկերների դեմ: Դրանց սուրբ Հովհան Օճնեցին անվանել է «խաչամաշտներ», որոնք «...վերացեալ ելին ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի Քրիստոսատեցութիւն», նույն տեղում, էջ 78:

հավիտյան հավիտենից. սրանում պիտի բնակվեմ, քանզի սիրեցի այն»⁶³ և «... Խաչը մեզ համար կոչ-վում է Սրբություն, Փրկություն, Արդարություն և Իմաստություն»:

Սուրբ Կյուրեղը իր նշանավոր «Կոչումն Ոնծայության» աշխատության մեջ գրում է. «Այսուհետև ամոթ չհամարենք Քրիստոսի Խաչը, այլ/ընդհակառակը/. եթե մեկը այն ծածկի, դու հայտնապես ճա-կատիդ վրա նշանակիր /խաչակնքվիր/: Քանզի դեերը, Արքունական Նշանը տեսնելով, շուտափույթ դողալով փախստական կիեռանան /քեզանից/: Եվ դու /Սուրբ Խաչի/ Նշանը /քո վրա/ առ ամեն ժամանակ. երբ /հաց/ կուտես, երբ կխմես... թե՛ նստելիս, թե՛ վեր կենալիս, թե՛ խոսելիս, թե՛ շրջելիս և թե՛ անկողին մտնելիս»:

Ավետարանականները արհամարհում են սուրբ պահքը, որը կարգել է Աստված՝ դեռևս մարդու արարչության ժամանակներից (տե՛ս **Ծննդոց 1.29, 2.16**): Հին Կտակարանում բազմաթիվ վկայությունների կան պահքի մասին: Այն կիրառվում էր և՛ Մովսեսի օրոք (տե՛ս **Ելք 34.28**) և՛ Ղատավորների օրոք (տե՛ս **Ղատ. 20.26**) և՛ Թագավորների ժամանակ (տե՛ս **Ա Թագ. 7.6**) և՛ բաբելոնյան գերությունից հետո (տե՛ս **Ա Եզր. 8.21**): Քրիստոնյաները ևս միշտ պահք են պահել: Այդ մասին հանդիպում ենք նաև Նոր Կտակարանում: Մեր Տեր Հիսուս Քրիստոս Ինքը 40 օր պահք պահեց և մեզ էլ պատվիրեց պահք պահել (տե՛ս **Ղուկ. 4.1-2, 4.4, Մատթ. 6.16-17, 9.15, 17.21**): Քրիստոսի օրինակով և հրահանգով Առաքյալները և աշակերտները իրենք էին պահք էին պահում (տե՛ս **Գործք 13.2, 14.23, Բ Կոր. 6.5, 11.27**) և պահք էին հանձնարարում քրիստոնյա հոտին (տե՛ս **Ա Կոր. 7.5**): Պահքերը 2000 տարի անբաժանելի մաս են կազմել մեր ժողովրդի հոգևոր կյանքի : Պահքի մասին հորդորներով է լցված մեր ողջ հայրախոսական ժառանգությունը:

Ավետարանական առաջնորդները շատ լավ իմանալով թե՛ ինչ է Մա-տաղը, մոլորեցնում են ժողովրդին, ասելով, որ իբրև թե այն զոհ է: Սակայն սուրբ **Սահակ Պարթև Հայրապետի** Կանոնում հստակ գրված է, որ **սուրբ Գրիգոր Լուսավորիչը** Հայոց ամբողջական Ղարձից հետո սահմանեց, որ անբան կենդանիներին կուռքերին զոհեր մատուցելու փոխարեն, դրանք որ-պես ողորմություն բաժանեն աղքատներին⁶⁴:

⁶³ Մղմ. 131.14

⁶⁴ «Մատաղի արարողակարգի համաձայն՝ քահանան, սաղմոսներ և աղոթքներ կարդալով, Խաչով օրհնում է աղը, որը տալիս են կենդանուն ուտելու, որպեսզի այն

Աղքատների և կարոտյալների խնամատարության գործն առաջին անգամ համայնական կյանքի մաս դարձավ քրիստոնեական Եկեղեցում, և Եկեղեցին սիրո այս առաքելությունը կատարեց պատմության մեջ չտեսնված և չսված անօրինակ եռանդով՝ իր

սրբվի աստվածային անեծքից (Ծննդ. 3)՝ վերստանալով առաջին օրհնությունը (Ծննդ. 1. 22):

«Օրհնիր, Տե՛ր, Քո ողորմությամբ այս աղը և սրբի՛ր սա, որպեսզի ամեն ինչի, որ սա խառնվի, հաճելի և ընդունելի լինի Քեզ և մեզ համար՝ հոգու և մարմնի մաքրություն ու առողջություն...», - ասվում է աղի օրհնության աղոթքում:

Աղը մաքրության և անապականության օրհնակ է, ինչպես Քրիստոս իր աշակերտներին է ասում. **«Դուք եք երկրի աղը» (Մատթ. 5.13)**: Նրանք էլ Աստծու խոսքի, այսինքն՝ Սուրբ Ավետարանի քարոզչությամբ մաքրեցին երկրի ապականությունը:

Ըստ **«Մայր մաշտոց»** ծիսագրքի՝ աղի օրհնության ժամանակ Դուկասի Ավետարանից ընթերցվող հատվածից պարզ է դառնում, որ մատաղը առաջին հերթին քարեգործություն է, ողորմության ու գթասրտության պտուղ և ոչ թե խնջույքի կամ զինարբուքի առիթ:

«Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին և ո՛չ էլ քո հարուստ հարևաններին..., այլ կանչիր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին և երա-նելի կլինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եվ դրա փոխարեն քեզ կհատուցվի արդարների հարության օրը» (Դուկ. 14.12-14):

Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետը նշում է, որ սուրբ Գրիգոր Լուսավորչի ժամանակներից սկսած՝ մատաղ էին անում Տիրոջ Հարության Տոնին, Տերունական և Մյրոց տոներին, մնջեցյալների հիշատակի համար և որպես հոգեհաց բաժանում կարոտյալներին:

Կա նաև **«տյառնական»** կոչված մատաղը, որ զանազան առիթներով մարդիկ խոստանում են Տիրոջը: Ըստ **«Կանոնագիրք հայոցի»**՝ սրանց վրա ավելանում է նաև Սուրբ Սեդան, այսինքն՝ Եկեղեցի հաստատելու առթիվ մատաղ անելը:

... Այսօր ոմանք անգիտաբար մատաղացու անասունի արյունը քսում են իրենց ճակատներին, որ ըստ սուրբ Ներսես Շնորհալու՝ արգելված է, որովհետև Սկրտության ժամանակ Սուրբ Մյուռոնի Կնիքն ստանալով մեր ճակատին՝ կարիքը չունենք այլ կնիքների և Վերջին Դատաստանի ժամա-նակ այս Կնիքով է, որ ճանաչվելու ենք (Հայտն. 9.4): ...Մատաղը ողորմություն է, որը նախատեսված է աղքատներին ու կարոտյալներին բաժանելու համար: Որպես ողորմության արդյունք, այն մեզ տալիս է մեղքերի թողության և փրկության հույս: Դրա համար էլ Տերը քաջալերում է՝ ասելով. **«Եղե՛ք գթասիրտ, ինչպես որ գթասիրտ է ձեր երկնավոր Հայրը» (Դուկ. 6. 36):**

Իսկ Պողոս Առաքյալն ասում է. **«Ձգեստավորվե՛ք գթասրտությամբ և ողորմությամբ» (Կողոս. 3.12)**, որովհետև **«Ողորմածությունը բարձրագույնս պարծենում է դատաստանի դիմաց» (Հակոբ. 2.13):**

Նաև երանելի Դավիթ Մարգարեն է ասում. **«Երանի նրան, ով հոգում է աղքատի մասին, որովհետև դատաստանի օրը Տերը կփրկի նրան անսահման չարից» (Առակ. 14. 21-22):** Հրայր սրկ. Խաչատրյան, «Մատաղ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Քարոզչության և Դաստիարակման Կենտրոնի քարոզ-բերքիկ:

ծագման առաջին իսկ օրերից հետագա սերունդների համար նմանողության գեղեցիկ օրինակ տալով: Այսօր հին Օրենքով կատարվող զոհաբերությունները բնականաբար անընդունելի և խոտելի են և դրանք բնավ ոչ մի կապ չունեն մատաղի հետ, քանզի. **«Քրիստոս մեկ անգամ որպես պատարագ մատուցվեց՝ շատերի մեղքերը վերացնելու համար» (Եբր. 9.28): Եվ. «Նա է քավությունը մեր մեղքերի և ոչ միայն մեր մեղքերի, այլև ամբողջ աշխարհի» (Ա Հովհ. 2.2):** Այլ հարց է, որ մի շարք անձինք, ամեն կերպ ջանում են, որպեսզի մարդկան աչքին, երկու միանգամայն տարբեր երևույթները, իրար հետ նույնացվեն:

Ավետարանականները, չընդունելով սրբոց և ընդհանրապես որևէ կարգի բարեխոսական աղոթքներ կամ խնդրվածքներ, անիմաստ և իզուր են համարում ննջեցյալի վրա քահանայի՝ Աստծո կողմից տրված իշխանությամբ կարգ կատարելու իրավունքը: Անիմաստ են համարում նաև այն, երբ որևէ մեկը իր շատ սիրելի մարդու համար իր աղոթքներում Աստծուն է խնդրում, իր պարտքն է կատարում ննջեցյալի հանդեպ: Մոռանում են, որ նույնիսկ հնում, բարեպաշտ ժողովուրդը իր ննջեցյալների համար աղոթում էր՝ նրանց հարության հույսը իրենց աչքերի առաջ ունենալով: Ինչպես Մակաբայեցիների քաջ առաջնորդի մասին է ասվում. **«Եթե պատերազմում ընկածների հարության ակնկալություն չունենար, զուր կլինէր մեռելների համար աղոթք մատուցելը» (Բ Մակ. 12.44):** Այս մասին Արիստակես Եպիսկոպոս Դավթյանը գրում է. **«Քրիստոնէական եկեղեցին աղօթք, հոգեհանգիստ կատարել, ողորմութիւն տալ, պատարագ մատուցանելը ննջեցելոց համար, մի հոգևոր բարիք կը համարէ, որ իրարու կընծայեն յաղթական և զինուորեալ եկեղեցիք իբրև մի եկեղեցւոյ անդամներ. որ միմեանց հետ կապուած լինելով, մին միւսոյն կը հաղորդէ իւր հոգևոր բարիքը, յաղթականը կը բարեխօսէ և զինուորեալը կաղօթէ, և այսպէս միմեանց փոխադարձ օգնութիւն կը հասցնեն. ինչպէս Պօղոս կը գրէ, զի՞նչ կարենք զոհութիւն մատուցանել Աստուծոյ վասն ձեր ի վերայ ամենայն խնդութեանն, զոր խնդամք վասն ձեր առաջի Աստուծոյ մերոյ, զցայգ և զցերեկ առաւել ևս աղաչենք տեսանել զերեսս ձեր և հաստատել զպակասութիւն հաւատոյն ձերոյ»⁶⁵. և թէ՛ ի նոյն իսկ և Քրիստոս մեռաւ՝ և եկեաց, զի կենդանեաց և մեռելոց առհասարակ տիրեսցէ»⁶⁶»:**

Ավետարանականները ննջեցյալների հանդեպ իրենց

⁶⁵ Եփես. 9.10:

⁶⁵ Հռոմ 14.9, Բ Կոր. 13.9, Բ Թեա. 1. 11, Հակ. 5. 14-16:

⁶⁶ *Արիստակէս Եպիսկոպոս Դաւթեան* «Աղանդաւորք», Վաղարշապատ, 1891, էջ 59:

գործելակերպով ավելի շատ անհավատ, անհույս և անսեր հեթանոսների են նմանվում, քան քրիստոնյաների: Միաժամանակ դեմ են գնում մեր ազգային գիտակցու-թյանը և ազգային արժեքներին, քանզի հայ ժողովրդի մեջ խորապես արմա-տացած է ննջեցյալներին հիշելու, նրանց հանդեպ հոգևոր պարտքի զգացում ունենալու գաղափարը, ինչպես **Արիստակես Եպիսկոպոսն** է իրավացիո-րեն նշում ավելի քան 100 տարի առաջ. «... Այսպես Աստուծոյ շնորհած ուրիշ ամեն բարիքներէն զրկելէն յետոյ, կը յարձակին ապա ննջեցելոց դէմ, կը մերժեն նոցա համար աղօթելը, նոցա յիշատակը կատարելը և ողորմութիւն տալը, որոնք ի հնումն ևս կը պաշտուէր և կը յարգուէր ջերմեռանդ հաւատով, և այսպիսի արհամարանօք կը վիրաւորեն մարդկանց զգացմունքը, որ իրանց ննջեցելոց յիշատակը պատուելու բարեպաշտութիւնն ունին՝ յարութեան գեղեցիկ յոյսը իրանց մէջ կենդանի պահելով...»⁶⁷: Ինչ վերաբերում է ավետարանական *առաջնորդների* կամ *պատվելիների* կողմից ննջեց-յալների վրա ինչ-որ «կարգ» կատարելուն⁶⁸, ապա դա անիմաստ, անօգուտ և ձևական մի նախաձեռնություն է, որովհետև նրանք միևնույն է իրենց արածին չեն հավատում և ոչ էլ Աստծուց տրված որևէ իշխանություն ունեն դրա համար:

Ավետարանականները բարի գործերը փրկության գործում ոչ էական են համարում: Ավետարանի դեմ են մարտնչում՝ իրենց սահմանադրության մեջ գրելով. «Նա (ավետարանական համայնքը) այս աշխարհը կամ նրա վա-յելքը չի համարում չարիք, մեղք... ոչ թե աշխարհի վայելքը, այլ վայելման ծուռ եղանակն է դատապարտում և իր անդամների իրավունքն է համարում բաղձալի օրինավոր հաճույքներ և բարիք-ներ...»⁶⁹: Մոռանալով Ավետարանի այն խոսքերը, որոնցով աշխարհը և նրա վայելքները սիրողներին շնացողներ է անվանում. «Շնացողներ, չգիտե՞ք, որ սերը այս աշխարհի հանդեպ թշնամություն է Աստծո դեմ, քանի որ ով ուզում է աշխարհը սիրել, Աստծուն իրեն թշնամի կանի... Հնազանդվեցե՞ք ուրեմն Աստծուն և դիմադրեցե՞ք սատանային, ու նա կփախչի ձեզանից... Մեղավորներ, մաքրեցե՞ք ձեր ձեռքերը. երկմիտներ, ուղղեցե՞ք ձեր սրտերը.

⁶⁷ Նույն տեղում, էջ 197:

⁶⁸ Այդ մասին տես օրինակ Հ. *Ղուկասեանց* «Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ», Թիֆլիս, 1886թ.:

⁶⁹ *Ղազարյան, Լևոնյան*, էջ 164:

տառապեցե՞ք, սգացե՞ք և լացե՞ք. ձեր ծիծաղը սուգի թող վերածվի, ձեր ուրախությունը՝ տրտմության: Խոնարհ եղե՞ք տիրոջ առաջ, և նա ձեզ կբարձրացնի» (Հակ. 4. 4-10) : Մարմնավոր հարստություն և բարեկեցություն... բայց Քրիստոս՝ Երկնքի և երկրի Արարիչը, տեղ չգտավ իր գլուխը դնելու համար... Ավետարանականները (*և ընդհանրապես բոլոր աղանդավորները*) հավատը հեշտալուր, եղծած և կեղծած ձևերով են մատուցում, որպեսզի շատերին մոլորեցնեն և իրենց թակարդը գցեն: Ճմարիտ Հավատը մանկական խաղ կամ հոգևոր բառերով ռաբիզ երգերը չեն, Քրիստոնեական Հավատը սխրանք է, ճանապարհ է առ Աստված Խաչի՝ միջոցով, խաչվելու՝ միջոցով, ասպաշխարության միջոցով, խոնարհության միջոցով, Աստծուց տրված և Եկեղեցու կարգած Պատվիրանները պահելու միջոցով, Աստծուն ամենից առավել, ողջ հոգով, մտքով, զորությամբ սիրելու միջոցով և Քրիստոսի ճշմարիտ գինվոր դառնալու անկեղծ փափագով և ո՛չ աղանդավորական «սուրբ-սուրբ» կամ «եղբայր-քույրիկ» խաղալու միջոցով և ո՛չ էլ հավատի մեջ (*կամ միջոցով*) շնչավոր կամ հոգևոր բարեկեցություն, հոգևոր վայելքներ փնտրելով ու Աստծո ճշմարտությունն ու Կամքը իրենց կամքին և իրենց կրքերին համաձայնացնել փորձելով: Քրիստոնությունը նահատակություն է, քրիստոնյան այն անձն է, որն հարածամ պատրաստ է հանուն իր Սուրբ Հավատի և Եկեղեցու նահատակվել (*բառի բուն իմաստով*)...: Այլ հարց է, երբ որոշ հարցերում չուզենալով թերանալ, մարդկային տկարությունների պատճառով թերանում ենք, սակայն բոլորովին այլ է, երբ մարդ չի կամենում կատարել Աստծո Սուրբ Կամքը, մերժում է Այն և նույնիսկ չի ուզում ճանաչել ասելով. «...Քո ճանապարհները չենք կամենում ճանաչել» (Հոբ 21.14):

Առաջին դարերում քրիստոնյաների նվիրումը, սերը առ Աստված այնքան մեծ էր, որ մարդիկ փափագում էին հանուն Քրիստոսի նահատակվել: Ինչպես սուրբ Գրիգոր Տաթևացին է ասում, սրբերից շատերի սերը այնքան մեծ էր, որ ցանկանում էին բազում անգամներ զոհվել հանուն Քրիստոսի և սրտագետ Աստված, տեսնելով նրանց սրտերի այդ փափագը, կատարում էր այն, և շատերը (*օրինակ սուրբ Չևոթոզ*) նահատակվելուց հետո նորից ու նորից հարություն էին առնում կրկին ու կրկին նահատակվելու համար՝ ահ ու սարսափի մեջ գցելով հեթանոսներին: Նահատակների այդ արյուն էր պատճառ դառնում Քրիստոնյանների շատանալուն, որովհետև խոսքերով չէ որ քարոզում էին, այլ կյանքով («Արյուն նահատակաց՝ հիմն Եկեղեցվո»

Տերտուղիանոս): Երբ հալածանքների շրջանը անցավ, այդ նահատակության հոգին էր, որ մարդկանց ստիպում էր անապատներ գնալ, ձգնավորներ, միայնակյացներ դառնալ ... Բողոքական-ավետարանականը չգիտի դա, չի ուզում իմանալ, չի կարող իմանալ... Դա միայն Սուրբ Հավատ և սրբված սիրտ ունեցողին է հասու: Բողոքականները չունեն վանքեր, չունեն կրոնա-վորներ, չունեն սրբեր, որոնց ծնողը Սուրբ Հոգին է, հետևաբար նրանցից տրտմում և հեռանում է Սուրբ Հոգին, նրանց մեջ գլուխը խոնարհելու տեղ չունի Աստծո Միածին Որդին *(փոխանակ այն բանին որ այնտեղ իրենց բնակության մշտական վայր են սարքել աղվեսներն ու ագռավները՝ դևերը)*, նրանց վրա է մնում Հայր Աստծու գայրույթը, այն բանի համար, որ արհամարում են Միածնի՝ մարդկանց փրկության համար թափած Արյունը...

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱՊՍՏԱՄԲԵԼՈՒ ՄԵՂՔԻ ՀԵՏԵՎԱՆՔԸ ...

Նույնիսկ ավետարանականների պարագլուխներն են տխրորեն խոստո-վանում, որ. *«հայ ավետարանականությունը այսօր հոգևորապես և բարոյապես այն չէ, ինչ որ էր երեկ»*⁷⁰ (իսկ *«ինչ որ էր երեկ»* դուք վերևում պարզ տեսաք), որ. *«Այսօր ավետարանականությունը գոյություն ունի որպես /լոկ/ անուն...»*⁷¹, որ իրենց *«Եկեղեցին»* ունեցավ բազում սխալներ և թերություններ և նշում են դրանցից մի քանիսը.

- *ծախողում Հայ Առաքելական Եկեղեցու բարեկարգման իրենց սկզբնական նպատակի մեջ*
- *հավասարակշռության չպահպանումը հայ-քրիստոնյա ժառանգության և բողոքական-ավետարանականության միջև*
- *այսպես կոչված «հայ ավետարանական եկեղեցին» թուլացրեց հայ ժողովրդի միասնականությունը*
- *այն ընտրեց Հայ Առաքելական Եկեղեցուց մեկուսանալու ուղին*

⁷⁰ Վ. Թուֆիկեան, էջ 9:

⁷¹ Նույն տեղում, էջ 323:

- *ավետարանականների «Եկեղեցին» աստիճանաբար դարձավ ինքնագոհ⁷²*
- *այն ժամանակի ընթացքում կորցրեց այն, ինչով արդարացնում էր իր ապստամբությունը և ինչով հիմնավորում էր իր գոյու-թյունը՝ ավետարանչությունը⁷³ /Աստծո խոսքի տարածումը⁷⁴։*

Ավետարանականներից շատերը խորհում են, որ իրենց հովիվները գործում են այն համոզումից ելնելով, որ իրենց անդամները ծառայում են իրենց և ոչ համագործակցում։ Ուրիշները խոցելի են համարում այն, որ մեծ խորխորատ կա հովիվների խոսքերի և գործերի միջև։ Այսպես՝ այսօր հովիվների վստահությունը լուրջ հարցականի է ենթարկված, քանի որ նրանց մեջ ամեն տեսակ ղեկավարներ կարելի է հանդիպել⁷⁵։

Հովիվները *«վիքվում են»*, իրենք իրենց ավելի լավը համարելով, քան իրականում են⁷⁶։

Շատ հովիվներ իրենց ծառայության դաշտը լքում են *«ավելի կանաչ արոտավայրերի համար»⁷⁷*։

Իր հերթին շարքային ավետարանականների հոգևոր վիճակի մասին որոշ պատկերացում կարելի է կազմել ավետարանական Վ. Թութիկյանի բերած վիճակագրական մի քանի տվյալներից.

Հայ ավետարանականներից շատերը մի քանի անգամ ավելի գումար են ծախսում խմիչքի, ծխախոտի և բախտախաղերի (կազինո) վրա, քան տրա-մադրում իրենց ավետարանական *«Եկեղեցուն»*։

120 ավետարանականների հարցումներից պարզվում է, որ նրանց **62.5** տոկոսը (*75 մարդ*) տարեկան երեք անգամ ավելի դրամ է

⁷² Նույն տեղում, էջ 129-135:

⁷³ Նույն տեղում, էջ 314:

⁷⁴ Բնականաբար, առավել լավ է աստծո խոսքը քիչ տարածվի, քան շատ, բայց եղծված մատուցմամբ, ինչպես անում են ավետարանականները:

⁷⁵ Վ. Թութիկյան, էջ 319-320:

⁷⁶ Դիվական հպարտությունը, մեծամտությունը, փառասիրությունը և նմանատիպ մեղքերը բնորոշ են բոլոր աղանդավորներին, քանի որ, ըստ Եկեղեցու Սուրբ Հայրերի, մարդ չի կարող ճշմարտապես խոնարհ և սուրբ լինել, եթե Ուղղափառ Սուրբ հավատ չունի, իսկ արտաքին ցուցադրական «խոնարհությունը» և «սրբությունը», որ նկատվում է (ավելի ճիշտ մարդկանց նկատել են տալիս, նրանց աչքը մտցնում աղանդավորները) կեղծ, արտաքին է և իրականում ծածկված, քողարկված հպարտության և ինքնախաբեություն /խաբեություն/ է:

⁷⁷ Վ. Թութիկյան, էջ 329:

ծախսում ծխա-խոտի, ալկոհոլի, շաքարվելու պարագաների և ոչ կենսական պարագաների համար, քան իրենց հոգևոր տուրքի համար⁷⁸:

21.7 տոկոսը (*26 մարդ*) այդպիսի բաների համար հոգևոր տուրքից երկու անգամ ավելի են ծախսում:

4.2 տոկոսը (*5 մարդ*) պատասխանել են, որ պարբերաբար ծխում, խմում և կազինոներում են անցկացնում իրենց ժամանակը՝ դրա վրա ծախսելով մոտավորապես նույնքան գումար, ինչքան հատկացնում են իրենց *«եկեղեցուն»* և բարի նպատակների համար:

Միայն **15.8** տոկոսն է (*19 մարդ*) հայտարարել, թե չեն ապրում նման կենցաղով, սակայն նրանցից միայն երեքն են ասել, թե հատկացումներ են անում *«եկեղեցուն»*:

130 ավետարանականների մեջ արված հարցումների տվյալներով նրանցից միայն **7.7 տոկոս** (*10 մարդ*) է հայտարարել, որ ամեն օր կանոնավոր կերպով Աստվածաշունչ են կարդում, **23.1 տոկոս** (*30 մարդ*) Աստվածաշունչ կարդում են տարին մեկ կամ երկու անգամ, իսկ մնացած **69** տոկոսը (*90 հոգին*) բնավ չեն կարդում Աստվածաշունչ (*դրա հետ մեկտեղ ավետարանականները մշտապես հայտարարում են, որ իրենց գլխավոր նպատակը Աստվածաշունչ սերտելը և այն ուրիշներին սովորեցնելն է (առանց կարդալու սովորելու և սովորեցնելու թերևս «հետաքրքիր», բայց խոստովանենք մի փոքր տարօրինակ ձև է) և պնդում են, որ իրենք առաջնորդվում են միմիայն Աստվածաշնչով*):

Հարցմանը մասնակցած ավետարանականների **90** տոկոսը չի պահում Կիրակին սուրբ պահելու Աստվածադիր Օրենքը (*Միևնույն ժամանակ ավետարանականները, մոռանալով առաքինությունների մայր խո-նարիությունը, հպարտանալով պարծենում են իրենց առաքինի և բարեպաշտ լինելով: Որը գործնականում արտահայտվում է կիրակի օրը եկեղեցի գնալու փոխարեն կազինո գնալով և ալկոհոլ ու ծխախոտ կույ տալով, կամ լավագույն պարագայում թատրոններ, մարզական խաղեր դիտելով և առևտրով զբաղվելով*):

Մեծ թիվ են կազմում (*ավելի քան 60 տոկոս*) (**1974-1976 թվականների տվյալներով**) նաև ավետարանականների խառը՝ հայ-այլազգի ամուսնությունները: Ավելին՝ **1999 թվականի** տվյալներով

⁷⁸ Թերևս նկատի ունի ավետարանականների գումարային մուծումները (այդ պրակտիկան պարտադիր լայնորեն կիրառվում է բոլոր աղանդավորների մոտ):

ավետարանական երիտասարդների ընդամենը 25 տոկոսն է ցանկալի համարում ամուսնությունը ազգակից հայերի հետ⁷⁹:

ԱՓՈՍԱՆՔՆԵՐ, ՑԱՎԱԿՑՈՒՅՈՒՆՆԵՐ...

Ավետարանական ղեկավարներն հենց իրենք ցավով նշում են, որ նույնիսկ 150 տարի անցնելուց հետո այսօր էլ իրենց մեջ չունեն որևէ կենտ-րոնական հեղինակություն, չունեն միատեսակ վարչաձև: Ավելին՝ չունեն միատեսակ սահմանադրություն և ոչ էլ բոլորի կողմից ընդունելի աստվածա-բանություն:

Այն այսօր ունի իրարից անկախ հինգ միություններ: Այդ միությունների մեջ գործող առանձին ինքնակոչ «եկեղեցիները» իրարից անկախ են գործում, և նրանց միջև եղած կապը թույլ է: Երբեմն նույն միության պատկանող եկեղեցիները ունենում են հարանվանական տարբեր կապեր: Օրինակ «Ամե-րիկայի հայ ավետարանական միությանը» պատկանող «եկեղեցի-ների» մի մասը «երիցական» են, այլ մասը՝ «ժողովական» (բողոքական ուղղություններ, հարանվանումներ) մեկ այլ մասը՝ անկախ...

Այսպիսի զուգահեռ հավատարմությունների պատճառով հայ ավետարանականներից շատերի մոտ հարց է առաջանում. կարելի՞ է արդյոք լինել լավ «երիցական» կամ «ժողովական», միևնույն ժամանակ լինելով հայ ավետարանական⁸⁰: Հայ ավետարանական «եկեղեցու» քաղաքականությունը նրանց առաջնորդել է ապագայնացման⁸¹:

Նրանցից ոմանք, իրենց մոտ հաճախողների թիվը այլազգիների հաշվին շատացնելու նպատակով նույնիսկ փորձեցին իրենց բնութիվով վերջնականորեն դառնալ (եթե արդեն վաղուց չէին դարձել) ամերիկյան «եկեղեցի»՝ ամեն ինչով նման տեղի ամերիկյան բողոքական «եկեղեցիներին»: Այս նպատակով նրանք իրենց պաշտոնական անվանումից ջնջեցին «հայ» անվանումը⁸²:

⁷⁹ Վ. Թութիկյան, էջ 322-326:

⁸⁰ Վ. Թութիկյան, էջ 307-308:

⁸¹ Նույն տեղում, էջ 309:

⁸² Չէ՞ որ եթե մարդ հավատափոխ և հավատորաց է եղել, ապա նա առանց խղճի խայթի կարող է կիրառելով «նպատակը արդարացնում է միջոցները» արատավոր կարգախոսը:

հավատուրացությունից հետո, բնականաբար, ազգու-րաց դառնալով: Նրանք, շատ ավելի առաջ գնալով, հրավիրեցին ազգու-թյամբ ոչ հայ հովիվներ: Սակայն նոր անդամներ ավելանալու փոխարեն, նրանցից հեռացան միամտորեն նրանց թակարդը ընկած, բայց ազնիվ և ազգասեր շատ հայորդիներ՝ գիտակցելով այդ, այսպես կոչված, *եկեղեցու* կործանարար դերը իրենց և իրենց ընտանիքի անդամների հոգիների համար:

Մեկ ուրիշ *«եկեղեցի»*՝ *«Նյու Յորքի Միացյալ հայ ժողովականը»*, պահեց իր անունը, սակայն փոխեց իր լեզվական քաղաքականությունը: Իրենց *«պաշտամունքները»* նրանք ամբողջությամբ սկսեցին անգլերեն կատարել, նպատակ ունենալով իրենց մեջ ներգրավել օտարազգի անդամ-ներ, մասնավորապես՝ մոտակա քրիստոնեի երիտասարդներին: Սակայն արդյունքը նույնն էր⁸³:

Հայ ավետարանականության ինքնությունը տազնապի մեջ է: Մի շարք երկրներում հայ ավետարանական *«եկեղեցիները»* բզկտվում են երկու հավատարմությունների միջև, այսինքն՝ ազգային կապերը մի կողմից և հարանվանական կապերը՝ մյուս⁸⁴:

Իսկ ամերիկյան ավետարանականների (*ոչ հայ*) բարքերի մասին կարելի է դատել հայտնի պատմաբան **Օլեգ Պլատոնովի** տողերից. *«...Միասն-ռականությունը /միասնեռական ամուսնությունը/ նաև հավանության է արժանացել ԱՄՆ-ի որոշ «քրիստոնեական եկեղեցիների» կողմից, մասնավորապես՝ լութերականների, կալվինիստականների, ավետարանականների, ինչպես նաև եպիսկոպոսականների, ունիթա-րականների, մեթոդիստների կողմից»*⁸⁵: Կարծում ենք՝ հայ ավետարանականները այնքան խելոք կզտնվեն, որ գոնե այս անգամ, իրենց իրական դեմքը վերջնականորեն ցույց տալու համար, կհրաժարվեն *«բարենո-րոգչություն մինչև վերջ սկզբունքից»* և գոնե ինքնապահպանման բնագոյով չեն փորձի որդեգրել և սերմանել հայ երիտասարդների մեջ այս դիվական մոլագարությունները:

⁸³ Վ. Թութիկյան, էջ 310:

⁸⁴ Նույն տեղում, էջ 312:

⁸⁵ Օ. Սլատոնով, "Почему погибнет Америка" (էլեկտրոնային տարբերակ):

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Վերջում նշենք, որ ավետարանականների գործունեության ռազմավա-րության դրույթներից է.

- *հասարակության ապակողմնորոշումը՝ պնդելով պատմական, փաստական, վարդապետական այն սխալ դրույթը, որ «ավետարանականները» Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցի են և /իրենց խոսքերով՝ Առաքելական եկեղեցու քույր եկեղեցի/... որի նպատակով աշխատանք է տարվում Առաքելական Եկեղեցու, նրա հոգևորականների հետ կապերի սերտացման, ճեմարանական համակարգ թափանցման և երկուստեք «հաճոյախոսությունների փաթեթի» հավաքման ուղղությամբ*
- *«քարոզչությունը», որը գործնականում վեր է ածվում հոգեորսության, ավետարանելու անվան տակ բողոքական հերձվածք տարածման*
- *«քրիստոնեական դաստիարակության» անվան տակ մուտք*

գործել այնպիսի ռազմավարական և կարևոր ոլորտներ ինչպիսիք են՝ դպրոցը (կրթական ոլորտը ընդհանրապես), մշակութային հաստատությունները, ՋԼՄ-ներ

- նյութական օգնությունների տրամադրում. դեղամիջոցների տրամադրում, ամառային ճամբարների կազմակերպում, ֆինանսական կառույցների միջոցով վարկերի և դրամաշնորհների տրամադրում: Սրանք մարդկանց դրականորեն են տրամադրում ավետարանականների նկատմամբ և նպաստում նրանց շարքերի համալրմանը
- ակտիվ լինելը այսպես կոչված «էկոմենիկ» շարժման մեջ, որը գործնականում նշանակում է էլ ավելի ապագազայնանալ և ավելի հեռու գնալ մոլար վարդապետությունների ճանապարհով:⁸⁶

Վերջում կուզեինք մեջբերել եռամեծ սուրբ **Գրիգոր Տաթևացու** պատվերը, որն հոգևոր և աշխարհիկ առաջնորդները միշտ պետք է իրենց աչքի առաջ ունենան.

«Գազան հերծվածողների դասը Քրիստոսի Հոտից հալածել, որոնց մասին Տերն զգուշացրեց, թե ոչխարի հանդերձներով հափըշ-տակող գայլեր են, քանզի հերծվածողը ընդունում է նույն քահանայի տեսք և ձև և Սուրբ Գրքից է խոսում, սակայն նենգավոր շրթունք-ներով է, որպեսզի «օրհնելով» և քաղցրախոսելով խաբի մարդ-կանց...»⁸⁷:

Մի բան է մեզ ուրախացնում, որ թերևս որոշ ուշացումով շատ հայորդիներ իրենք էլ են հասկանում, թե իրականում ովքեր են ավետարանականները:

Ուրեմն Փառք Աստծո, որ ժողովրդի (*զոնե նրա մի մասի*) մեջ դեռ ամուր է ազգային և հոգևոր ինքնության գիտակցությունը...

Արմեն Կարապետյան

⁸⁶ Վերոհիշյալ կետերի մասին որոշ պատկերացում կարելի է կազմել թերթերով Հայ Ավետարանչական Ընկերակցության «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի» եռամսյա հանդեսի համարները (օրինակ՝ 2000 թ., թիվ 3, էջ 1; 2001 թ., թիվ 2, էջ 19; 2001թ., թիվ 3, էջ 7-8, 22-23; 2002թ., թիվ 1, էջ 2 և այլն):

⁸⁷ Ամառան Հատոր, էջ 439:

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ

Դիտարկումներ մամուլից

«Ազգ» օրաթերթ, #224, 08/12/2005

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՂԱՆԴ Է

Ավետարանչական եկեղեցին իրեն քույր եկեղեցի է հորջորջում Հայաստանյազ եկեղեցուն եւ մշտապես, պատեհ եւ անպատեհ հայտարարում է, որ սատարում է մայր եկեղեցուն, սակայն, իր գործունեությամբ ոչ պակաս աղանդ է դիտվում մեր կողմից: Որովհետեւ մշտապես հետամուտ է հոգեորսության նաեւ մեր հոտի խաղաղ ընթացքը խափանելուն, այսպիսի հայտարարությամբ հանդես եկավ նախընթաց օրը Մայր աթոռի տեղեկատվական կենտրոնի տնօրեն Վահրամ քահանա Մելիքյանը:

Ըստ Մայր աթոռի ներկայացուցչի, ավետարանչական եկեղեցու սպասավորների տարբեր ձեռնարկները, տարբեր հայտարարություն-

ները պարզապես փաստում են այդ իրողությունը: Մի խոսքով, հաստատապես՝ Ավետարանչական եկեղեցին մեզ քույր եկեղեցի չէ: Հիշեցնենք, որ քրիստոնեական դավանաբանության ջատագով ավետարանչական եկեղեցին նաև հեռուստաընկերություն ունի՝ Ավետիսը և բավական ակտիվ սփռում է իր գաղափարաբանությունը նաև եթերից:

Կ. Չ.

«Ազգ» օրաթերթ, #245, 22/12/2006

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԹԵ ՀՈԳԵՈՐՍՈՒԹՅՈՒՆ
(Որոշ կրճատումներով)

Հայտնի է, որ անկախացման շրջանից սկսած տարբեր կրոնական հոսանքներ, պաշտամունքներ և «բարեգործական» կազմակերպություններ, սոսկ «մարդասիրական իրենց բնույթից» դրդված չէ, որ եկան մեր երիտասարդ հանրապետություն՝ գորավիզ լինելու ծանր պայմաններում հայտնված կարիքավոր մեր ժողովրդին: Հստակ նպատակային ռազմավարություն կար, որ պիտի իրագործվեր օգնության անվան տակ. ջլատել, մասնատել հայ ժողովրդին, կործանել նրա գոյության և ինքնության հիմնասյունը՝ հավատը, հավատարմությունը ազգային արժեքներին և մայր եկեղեցուն:

Բարեգործության անվան տակ սկսվեց նախադեպը չունեցող հոգեորսը և ո՞ւմ մեր իսկ հայրենակիցների միջոցով. ինքներս օտարի օգնությամբ սկսեցինք մեր ձեռքով մեզ դանակահարել: Մի սկզբունք,

որ լավագույնս որդեգրվեց մեր կյանքի տարբեր ոլորտներում: Սակայն, ինչպես Ավետարանում է ասվում, առավել հարկ է վախենալ գառնազգեստ գայլերից: Եթե Եհովայի վկաների, մորմոնների եւ այլ աղանդավորների կարելի է դյուրությամբ զանազանել եւ քայլեր ձեռնարկել, ապա մեր կողքին հայտնված գառնազգեստ գայլերին՝ ավետարանչականներին, դժվար է նշմարել: Քանի որ անամոթաբար կարող են ասել, որ ընդունում են մայր եկեղեցին՝ հաջորդ պահին վերամկրտելով Հայաստանյայց առաքելական եկեղեցում կնքվածներին եւ մերժելով եկեղեցին եւ հոգեւորականությանը, տոնում են Հայ եկեղեցու տոները՝ նշելով, որ Հայ եկեղեցու ծեսը պարտադիր չէ, հավատացյալներին մոլորեցնելու նպատակով երգում են մեր շարականները, ժողովրդի աչքին հեղինակություն ձեռք բերելու համար իրենց թերթիկներում տպագրում են խորամանկաբար իրենց լուսանկարները տարբեր բարձրաստիճան հոգեւորականների հետ՝ միաժամանակ եթերներում հայտարարելով, որ միրուքի մեջ չէ Քրիստոսի հանդեպ հավատի վկայությունը, իրենց եկեղեցու անունն էլ անգամ փոխեցին՝ դարձնելով Հայաստանյայց ավետարանական եկեղեցի, եւ բազում նման օրինակներ կարելի է անվերջ թվարկել: Սակայն, երբ անձի աչքերը բացվում են եւ ուզում է դադարեցնել իր հաճախումները, սկսում է գործել գրավիչ կաշառքը՝ պարենի պարկը կամ կոշիկի տուփը, որին ծանոթ են ինչպես անհասներ, այնպես եւ բազում դպրոցներ. հուսով, որ այդպիսով գոնե կկարողանան պահել կարիքավորներին:

Սակայն առավել սարսափելիս այն է, որ սկսում ենք անտարբերությամբ վերաբերվել այս ամենին՝ թույլ տալով, որ գառնազգեստները շրջեն մեր մեջ եւ հափշտակեն միամիտներին, մանուկներին ու կարիքավորներին: Անտարբերությամբ ենք վերաբերվում այն իրողությանը նաեւ, որ նույն ավետարանչականները, բողոքական այլ հարանվանությունների նմանությամբ, կործանարար իրենց քաղաքականության իրագործման համար միջոցներ ապահովելու նպատակով սփյուռքում մեր իսկ հայրենակիցներին եւ օտարներին հայտարարում են, թե գնում են Հայաստան Քրիստոսի լույսը տարածելու, աստվածատես մեր ժողովրդին քրիստոնյա դարձնելու. մի ժողովրդի, որ դարերով արյուն է թափել նույն Քրիստոսին հավատարմությունը փաստելու համար:

Այսօր կանգնում ենք այս ցավալի իրողության առջեւ, որ ավետարանչական հովերով մեր մոլորյալ ազգակիցները եկել են մեզ եւ մեր մանուկներին "քրիստոնեացնելու": Առավել զարմանալի է գիտենալ, որ որոշ պետական այրեր իրենց հերթին չեն հապաղում իրենց հնարա-

վորությունների սահմաններում ոչ միայն օգտակար լինել այդ կասկածելի կառույցների պատասխանատուներին, այլև գնահատանք հայտնել նրանց: Այսպես օրինակ՝ վերջերս իմացանք, որ Թային քաղաքում դեռևս 1999 թվականից քաղաքապետարանն անհատույց սեփականության իրավունքով ավետարանչականներին է փոխանցել թիվ 3 մանկապարտեզը...

Այսօր նույն մանկապարտեզում մի սենյակ է առանձնացված իբրև «եկեղեցի» եւ մի «պատվելի» հովիվ էլ նշանակվել է այդտեղ հավաքներ անցկացնելու համար: Իսկ նախորդ քաղաքապետը, մեծապես գնա-հատելով ավետարանչականների «հանրօգուտ» ծառայությունները, անգամ քաղաքի փողոցներից մեկն անվանափոխել է ի պատիվ ավետարանչականների հովիվ Ռենե Լեռնյանի: Թերևս մեզ անհայտ են քաղաքին կամ որոշ անհատների մատուցած այն անգնահատելի ծառայությունները, որոնց արդյունքում ավետարանչականները հավեր-ժացվեցին Թայիում, սակայն ցավալի է տեսնել այս ամենը:

Կուզեինք նմանօրինակ ազգադավ կառույցներին կանաչ լույս տվողների աչքերին նայելով հասկանալ, թե ինչու են, ուրանալով իրենց նահատակ նախնիներին եւ մեզ փոխանցված ժառանգությունը, այդ քայլերի դիմում՝ գիտենալով, թե ինչպիսին են հեռահար նպատակ-ները բոլոր այդ կազմակերպությունների: Ե՞րբ պիտի անդրադառնանք այս ամենին եւ կանգ առնենք՝ դադարեցնելով սեփական եսը եւ ազգային արժեքներն ու արժանապատվությունը ոտնահարելու գնով նյութականը հետապնդելու մեր խելահեղ համընդհանուր վագրը:

Ա. Մեսրոպյան

«ժամանակ», 2002 թ., մարտ 1-7

ԴՌՆԱԿԸ ԲԱՅ ՆԵՐՍ ԳԱՄ ԵՍ
Անուշ անուշ բզկտեմ քեզ...

/Որոշ կրճատումներով/

*Մեր ժամանակներում պարզապես հարգի է խոսել ժողովրդի
շահերը պաշտպանողի դիրքերից:*

*Այլ կերպ չի լինում: Խոսում են բոլորը ու բոլորն էլ այս ժողովրդի
«լավն են ուզում»: Իսկ ո՞րն է լավը, և ո՞ւմ է այն ձեռնատու: Իհարկե՝
խոսողին:*

Ասածիս վառ օրինակն է վերապատվելի մի այր, որ մշտապես

հանդես է գալիս լավագույն մաղթանքներով, բայց շատ անորոշ և հեռահար կասկածելի նպատակներով: Վերապատվելի Ռընե Լևոնյան: Սկիռքահայ այս անձնավորությունը Հայաստան եկավ անկախությունից և դարաբաղյան պատերազմից հետո: Ո՞վ է նա և ինչ է «շինում» Հայաստանում: Նվերնե՞ր է բաժանում լավ (ո՞ւմ կողմից և ի՞նչ նպատակներով՝ այլ հարթության վրա քննարկելիք հարց է)... Ահա այստեղ է, որ պետք է հիշեցնենք, թե սույն հար-գարժան այրը միշտ պատրաստ է «գեղեցիկ ու անմեղ» մտքեր հնչեցնել, մտահոգիչ խնդիրներ բարձրաձայնել և նույնիսկ վերլուծել՝ չմոռանալով «ձեռքի հետ» մի քանի ծանր քար գլորել ոչ այլ տեղ, քան Հայ Առաքելական Եկեղեցու և նրա ներկայացուցիչների կողմը:

«Ուզենք, թե չուզենք հայ մարդն ունի հոգևոր պահանջներ, և եթե դու չես բավարարում այդ պահանջները, մեկ ուրիշը կանի այդ», - ասում է Ռընե Լևոնյանը և քիչ անց եզրակացնում, որ եթե հանդուրժող չենք աղանդների նկատմամբ, ուրեմն նույնն է, թե՛ «վաղվանից պետք է վերնիսաժի բոլոր նկարիչները միայն Մասիսը նկարեն»:
Վերապատվելու տրամաբանությունը ուղղակի վեր է մեր պատկերացումներից: Մենք կարող ենք ենթադրել, որ Մասիսը ֆրանսահայ մտավորականի համար այնքան էլ մեծ ներշնչանքի աղբյուր չէ՝ ազգային սրբության և ոգեշնչման աղբյուր լինելու իմաստով (թերևս նա կգերադասեր Էյֆելյան աշտարակն ու Սենայի կամուրջները), բայց գոնե աստվածաշնչյան վկայությունը քիբլիական լեռան մասին պիտի նրան ետ պահեր անհաջող համեմատությունից: Սա՛ իմիջիայլոց: Ըստ Ռ. Լևոնյանի, ինչպես պարտադիր չէ, որ բոլորս Մասիս նկարենք, այնպես էլ պարտադիր չէ, որ միայն Առաքելական Եկեղեցին մեր հոգևոր տունը համարենք: Թերևս այսպես է մեկնաբանվում վերապատվելու այլըն-րանքային դավանաբանական «կուտը», որի կողը գաղտնագերծելու համար համար էլ գրիչ եմ վերցել:

«Մարդու խղճի ազատություն՝ այս է խնդիրը: Կամ կընդունինք անիկա, կամ՝ ոչ» /Ռ. Լ./: Վստահ եմ, որ եթե նման «խղճի ազատությունը» պիտի բերի ազգի պառակտման և ազգային դիմագծի վերջնական աղձատման, պիտի չընդունվի: Բայց բարձրաձայնել այս հարցը այդպիսի շեշտադրումով, նույնն է, թե հասարակությանը... պարտադրել խղճի ազատությունը: Այլ խոսքով՝ Ռ. Լևոնյանը «խելք է սովորեցնում», թե՛ պետք է հանդուրժել աղանդները և այլադավանությունը: Հարց է ծագում ում է ձեռնատու նման

ազատությունը, որից անարխիայի, եվրոընտանիքի ցածրակարգ խավերին ծուլվելու և ազգային «ես»-ը աղձատելու հոտ է գալիս...

Կամ՝ «Թող Առաքելական Եկեղեցու սպասավորը նախ ինքը իրապես քրիստոնյա լինի, նոր՝ քարոզի մյուսներին» (Ռ. Լ.): Միամիտ մեկը այս խոսքերի մեջ կփորձի ազնիվ մտահոգություն կարդալ: Բայց եկեք կշռա-դատենք. ինչո՞ւ է վերապատվելին ամեն անգամ նմանատիպ հայտարարու-թյուններով հանդես գալիս: Հայտարարություններ, որ քանի գնում, այնքան ինքնավստահ երանգ են ստանում: Արդյո՞ք դրա նպատակը չէ «ջրել» 70 տարվա անհանդուրժողական թմբիրից հառնող և նոր շունչ առնող Հայ Առաքելական Ազգային Եկեղեցու հաստատուն առաջխաղացումը: Արդյո՞ք Ռընե Լևոնյանը բարձրախոսների և հեռուստաէկրանների առաջ «մտահոգ» մարդու կերպար ստեղծելով չի զբաղված:

Նա սիրում է խոսել 1700-ամյա եկեղեցու մասին և իրեն «խառնել» բարձրաստիճան հոգևոր հայրերի դասին: Սակայն դա չի խանգարում նրան առիթ-անառիթ «մուր քսել» մեր հոգևորականների քղանցքներին, որոնց մեջ, ինչպես ամեն բնագավառում, լավն էլ կա, վատն էլ: Մի՞թե նա չի կարող Առաքելական Եկեղեցու «խոհանոցի» մասին իր դատողությունները, կարծիքներն ու առաջարկները նախ ավելի բարձր ատյաններում հնչեցնել, թե իրեն պետք է, որ ԻՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱ ՀԱՄԱՅՆ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆԸ: Չէ՞ որ յուրաքանչյուր հարց ավելի հեշտ է լուծել ուղղակի հասցեատիրոջ (իմա՝ Հայ Առաքելական Եկեղեցուն կամ օրենքների մասով՝ Ազգային ժողովին) դիմելով: Բայց ոչ: Ռընե Լևոնյանը պիտի ժողովրդին հայտնի իրմտահոգությունները, նման այն տատիկին, որ թռռ-ներին բաժանում է մեկական գաթա և որպես շնորհակալություն և երախտագիտություն՝ ստանում «տատիկի բաժինը» յուրաքանչյուր թռռնիկի գաթայի կեսը:

Հավանաբար Ռընե Լևոնյանը ժողովրդին հայտնում է իր մտահոգու-թյունները, որովհետև ժողովուրդը հավաքական գոյական է, նրանից կոնկ-րետ և կառուցողական առաջարկների մասին հարցեր ստանալը հավանա-կան չէ: Իսկ դրա փոխարեն չափազանց մեծ է մարդկանց հոգիներում սև բծեր ընդգծելու մարմանջը: Օրինակ՝ ինչո՞ւ չփնտվել Առաքելական Եկեղեցու սպասավորներին և այդպիսով «տեղ բացել» ավետարանչականների համար՝ չմոռանալով նաև հիշեցնել, որ դու սիրում ես Աստծո ստեղծած բոլոր մարդկանց՝ ուղղամիտ հավատացյալներին էլ, անհավատներին էլ, աղանդավորներին էլ... բայց ո՞ւմ ավելի շատ՝ պարզ է առանց հայտարարության:

Պետք է ենթադրել, որ Ռ. Լևոնյանը իր «մտահոգ» ելույթներով շատ բանի չի հասնի, որովհետև հայ ժողովուրդը դարեր ի վեր, նույնիսկ իր արյան գնով հավատացել է միայն մեկ Եկեղեցու, իր սերունդներին մկրտել ու ծիսակարգի մասնակցել միայն իր՝ Առաքելական Եկեղեցում և Սուրբ Երրորդությանը երկրպագել այնպես, ինչպես սովորեցրել են նրան Գրիգոր Լուսավորիչը, Գրիգոր Տաթևացին, Ներսես Շնորհալիին ու Գրիգոր Նարեկացին:

Այնպես որ՝ ռընեներն ու այլ «հյուրեր» ընդամենը ժամանակավորապես տեղ կունենան հայոց արևի տակ, ինչպես թեթևասահ այն ամպերը, որ քամիների նշան են:

Շ. Գրիգորյան

**ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՌԸՆԵ ԼԵՎՈՆՅԱՆԸ
ԺՈՂՈՎՐԴԻ ՕԳՈՒՏԸ ՏԵՍՆՈՒՄ Է
ՀՈԳԵՎՈՐ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՄԵՋ**

(Որոշ կրճատումներով)

Սույն թվականի հունվարի 29-ին վերապատվելի Ռընե Լևոնյանը հյուր-ընկալվեց «Արմենիա» հեռուստաընկերության «Հայրենիք-սիյուռք» հաղորդ-մանը, ուր կրկին հանդես եկավ, մեր կարծիքով,

անուղղամիտ խոսքերով և հայտարարություններով:

Եթե փորձենք ընդհանուր անդրադարձ անել, ապա կարելի է ասել, որ վերապատվելին կրկին փորձում-պրպտում է ժողովրդի օգուտը գտնել հոգևոր պառատկման մեջ՝ անընդհատ քարոզելով ժողովրդի բաժանում Մայր Առաքելական, ավետարանական և կաթոլիկ եկեղեցիների միջև: Պետք է հիշել, որ հայ ավետարանական շարժումը իր հերթին պառակտված է 3 ուղղությունների՝ հայ ավետարանական, Երևանի ավետարանական և ավե-տարանական-մկրտական: Եվ ծիծաղելի է, երբ այդ պառակտիչ և պառակտ-ված կազմակերպության ղեկավարը հանդես է գալիս հակաադանդավորա-կան պայքարի մասին հայտարարություններով և առավել ևս, ի թիվս այլոց, իրեն վերագրում է հակաադանդավորական պայքարի առաքելությունը:

Վերապատվելին, ինչպես շատերն են նկատել, շատ է սիրում հիշատակել Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև արք. Մարտիրոսյանի նախագահած կլոր սեղանը՝ ցույց տալու, թե իբր Հայ Եկեղեցին ճանաչում և ընդունում է ավետարան/չ/ականներին: Մինչդեռ նա անշուշտ սխալվում է: Ինչ վերաբերում է Հայ Առաքելական Եկեղեցու վերա-բերմունքին, ապա թերևս տեղին է հիշեցնել հունահայոց թեմի առաջնորդ Ռսկան արք. Գալվաքյանի՝ «Ազգ» թերթի 2001 թ. թիվ 199-ում հրապարակ-ված հետևյալ խոսքերը. «Օրինական չէ այն եկեղեցին, որ գալիս, իմ «կալվածքի» մեջ է մտնում իր վարդապետությամբ: Ինձ համար անըմբռնելի են հայ կաթոլիկ կամ հայ բողոքական հասկացողությունները: Մեր Եկեղեցին միշտ եղել է Հայաստանյայց Եկեղեցի: Մեր պատմությունը կերտողը Հայաստանյայց եկեղեցին է»: Արդարև, ըստ մեզ էլ օրինական չէ այդպիսի կեղծավոր եկեղեցին: Եվ թերևս վերապատվելին էլ դա հասկանա և դադարեցնի իր պառակտիչ գործունեությունը: Եվ, ընդհանրապես, մեզ հետ թերևս շատերը համաձայնեն, որ նա, ով մտահոգ է իր ժողովրդի կյանքով, ինչպես իրեն ներկայացնում է Ռընե Լևոնյանը, ձգտում է ներքին միության և ոչ թե բաժանման: «Մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ եկեղեցի» գաղափարը թերևս մի օր հոգեհարազատ դառնա վերապատվելուն, և նա վերադառնա հայոց մոր՝ Հայ Առաքելական Եկեղեցու գիրկը:

Վերջում հիշենք Ռընե Լևոնյանի մի արտահայտություն այդ նույն հաղորդումից. «Ուրախ եմ, որ 301 թվին պաշտոնապես ընդունեցինք քրիստոնեությունը» (բայց ի՞նչ ունի կաթոլիկությունից անջատված Մարտին Լյութերի հետևորդ Ռընե Լևոնյանը 301 թ.

իրադարձությունների հետ):

*Ա. Արզումանյան
«Ազգ օրաթերթ»*